

ՄԱՂԻԿ ԿԵ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹ ԵՐԵՎԱՆԻ ՕՐԵՐԸ: — Հասարակ 40 փարս:

Բաժանորդագրին կԱՆԻՍԻՆ — Պոլսոյ համար տարեկան 45 դր: վեցամսեայ 23 դր: եռամսեայ 12 դր: Գաւառացի համար տարեկան 50 դր: վեցամսեայ 26 դր: եռամսեայ 14 դր:

Ռուսոյ համար տարեկան հինգ ռուբլի: Ռուսիչ երկիրներու համար 12 ֆրանք:

Գաւառներէն դրոշմաթուղթ կ'ընդունուի: Միայն երեք թիւ ապստեղ կը զրկուի: այնուհետեւ քաժանորդագրին չը վճարողը կը դադրի թերթը ընդունելէ:

Մանուցման տողը 2 դր: 40 փարս

ՄԱՂԻԿ

Լ Ր Ա Պ Ի Ր

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարս

ՄԱՂԻԿ Ի ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԱՃԵՆ ԳՐՈՒԹ ԿՐԻՄԻ
Առ ՏԵՐՊԵՆ-ՀՐԱՄԱՐԱԿԻՅ ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ
Պոլս, Էսկի-Չաբթիէ. Պերդերեան Տպարան
درعليهده اسكي ضبطيه زقاغنده بربريان مطبعه سنده
« زاغيك » غزتهسى مديرى بالاقاشيان حوونان
HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien « Dzaghik »,
Rue Esski-Zabtié, Imprimerie N. Bérbérian
CONSTANTINOPLE

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Ա. ՏԱՐԻ. ԹԻՒ 10 Շ Ա Բ Ա Թ 15 ՅՈՒՆԻՍ 1891

ՎԱԳՑ ԿԱԼՈՒԱԾՈՑ ՓՈՒԱՆՑՈՒՄՆ

Բ.

Յայտնեցինք թէ վախճի կալուածակալը երբ անզաւակ վախճանին, իրենց անունով արձանագրեալ կալուածք կը գրաւուին վախճին սեպհական արտոյ, որ ըսել է, միւրեւիտիւն կողմանէ, ի մեծ զրկումն վախճանելոյն ժառանգորդաց: Թուրքոյ մեծ քաղաքացի ընտանեկան սեպհական հարստութիւն չ'ունենալը գլխաւորապէս աստի յառաջ եկած է, զի այս սք որ այս օր ընդարձակ ու բազմաթիւ կալուածոց տէր է, մեծ եկամուտներ ունի և ընտանեօք բարեկեցիկ ու հարուստ կը կարծուի, վաղիւ անորդի մեռանելով, ոչինչ կը թողու իւր ծնողաց, եղբարց, ջերց, թոռանց և կամ ամուսնոյն, միւրեւիտիւն ձեռք կը դնէ բոլոր կալուածոց վերայ և իրենց ընտանեկանն կը վանէ, իրենց եկամուտներէն կը զրկէ ժառանգորդները: Սերիզի կը վաճառէ կալուածներն և արդիւնքը կը յատկացնէ վախճին: սակայն այս կործանարար դրութիւն Օսմ. Պետութեան ընդունած տնտեսական աշխարհաշէն սկզբանց հակառակ էր. երջանկայիշատակ Սուլթան Ազիզի օրով որոշուեցաւ վերջապէս վախճ կալուածոց ժառանգարար ստացման սահմանն ընդարձակել (Թէվսիի ինքիգալ), և այդ հիման վրայ հրատարակեցաւ մի օրէնք 1284 մուհարրէմ 17 արարական թուականին. (տես Տիւսթուր կոչեցեալ Օսմ. օրինագրքի առաջին հատոր, էջ 223): Նոյն օրինագրքի երրորդ հատոր 459^թ էջին մէջ 1292 Բէճէպ ամսոյ 4 թուականու հրատարակեալ օրինօք, սա հաստատակ վախճ կալուածներու ժառանգորար ստացման սահմանին ընդարձակումն (Թէվսիի ինքիգալ) ոչ միայն աւելի ևս ճշգրտեցաւ, այլ և սրտաւորիչ հանգամանք մ'ստացաւ. այսինքն իւրաքանչիւր կալուածակալ ստիպեալ եղաւ այդ ընդարձակումը նուիրագործող օրինական արամադրութիւնները կատարել՝ որոշեալ ծախքերը վճարելով. կերելի թէ արտուղը և ընդդիմութիւնք երևան ելան այս առթիւ և կառավարութիւնն ուղեւով կալուածակալաց ազատութիւնն յարգել և բարիքը բռնի չը բաշխել, 1292 զիքստտէ 15 թուականու յայտարարեց թէ վախճ կալուածոց ժառանգարար ստացման սահմանին ընդարձակումը՝ կալուածատեարց կամօք և սահանջմամբ պիտի կատարուի այլ ևս և ոչ թէ բռնի:

Այս է ինդրոյն այժմու կացութիւնը: Բացարեւմեք այժմ թէ այս ընդարձակումն ինչպէս կը կատարուի և մինչև ո՞ր աստիճան: Ա. Ըստ վաղեմի դրութեան արու և էգ զաւակաց մէջ հաւասար բաշխումն. (եթէ զաւակաց մին նախապէս վախճանեալ է զաւակներ թողլով, սքա իրենց հօրն ստանալիք

բաժինը կը ժառանգեն իրենց մէջ հաւասար ստամբ: Ա. աստիճան:

Բ. Եթէ արու և էգ զաւակներն կալուածակալն յառաջ վախճանած են, իրենց թողած զաւակունք, այսինքն կալուածակալին թոռները՝ հաւասարապէս բաժին կ'ստանան. զոր օրինակ, եթէ կալուածակալին արու կամ էգ զաւակները նախապէս մեռած են՝ մին երեք և միւսը մի զաւակ թողլով, այս չորս թոռները մէկ մէկ քառորդ մասն կ'ստանան: ԲԵՒ աստիճանի ընդարձակումն:

Գ. Ի սրահսել զաւակի և թոռան, կալուածը կը մնայ հօր և մօր հաւասար բաշխումով, կամ ասոնցմէ միայն միոյն՝ եթէ միւսն արդէն մեռած է. (այս սրարագային մէջ եթէ կալուածակալն այրի ամուսին թողած է, կալուածին մէկ քառորդն անոր կը սրտականի): ԳԵՒ աստիճանի ընդարձակումն:

Դ. Եթէ վախճանող կալուածակալը հայր կամ մայր չը թողուր, իւր միահայր ու միամայր եղբարքն և քորքն հաւասարապէս կը ժառանգեն. (կենդանի մնացող ամուսնոյն թողլով մէկ քառորդ բաժին): ԴԵՒ աստիճանի ընդարձակումն:

Ե. Եթէ միահայր ու միամայր եղբարք ու քորք չկան, սոսկ միահայր եղբարք ու քորք հաւասարապէս կը ժառանգեն. (այս սրարագային մէջ ալ, եթէ կալուածակալն այրի ամուսին թողած է, կալուածին մէկ քառորդն անոր բաժին կ'ընայ): ԵԵՒ աստիճանի ընդարձակումն:

Զ. Եթէ սոսկ միահայր եղբարք ու քորք կը սրտական, միամայր եղբարք ու քորք հաւասարապէս կը ժառանգեն կալուածը. (դարձեալ այս սրարագային մէջ ալ, այրի ամուսինը՝ եթէ կայ՝ կալուածին մէկ չորրորդին կը սիրանայ): ԶԵՒ աստիճանի ընդարձակումն:

Է. Երբ ժառանգական այս ամէն աստիճանք կը սրտական, կալուածակալին այրի թողած ամուսնոյն կը մնայ բովանդակ կալուածը ժառանգելու իրաւունքը: ԷԵՒ աստիճանի ընդարձակումն:

Կարևոր է աստ յիշատակել գլխաւոր տարբերութիւններն որ կան միւլէ կալուածի մը և Թէվսիի ինքիգալի ենթարկեալ վախճ կալուածի մը թէ՛ ժառանգականութեան և թէ՛ սերիչ օրինական սրայմանաց մէջ:

Թէվսիի ինքիգալ սրարագ
Վախճ կալուածը չը նկատուի իր ժառանգական գոյք կամ դրամ, և ըստ այսմ,
Ա. Վախճանելոյն արու և էգ զաւակներն թէ արու և էգ զաւակներն ունի, արուի բաժինն էգի բաժնին կըրտանան:
Միւլէ կալուածը կը նկատուի իր ժառանգական գոյք կամ դրամ, և ըստ այսմ,
Ա. Վախճանեալն եթէ արու և էգ զաւակներն ունի, արուի բաժինն էգի բաժնին կըրտանան է:

Բ. Երբ վախճանեալը զաւակ ունի, կալուածն ամուլղովին անոր կը մնայ. վախճանելոյն հայրը, մայրը, կինը զաւակաց նեա մեծ կամ փոքր բաժիններ կ'ըստանան կալուածէն: Կինը բաժին չ'են ըստանար:

Գ. Վախճանեալն, եթէ միակ աղջիկ զաւակ թողու, ամուլղ կալուածն անոր կը մնայ. հօրեղբայր, հօրեղբօրորդի կամ այլ ազգականք որ վերի եօթնաստիճանաց մէջ յիշկին կրկինը կ'ընդունանք: Գ. Եթէ վախճանեալը միայն աղջիկ զաւակ ունենայ, հայրը կամ եղբայրը և կամ հօրեղբայր, հօրեղբօրորդի կամ այլ ազգականք արու ազգականքն իբր մանչ զաւակ կը ներստատիճանաց մէջ յիշկին կրկինը կ'ընդունանք: Գ. Եթէ այդ աստիճանաց մէջ արու չը զանուի, պետական զանձուն կը մնայ իւր բաժինը:

Դ. Երբօր և քորք զաւակունք չ'են կարող ժառանգել:

Ե. Եթէ վախճանեալն ունենայ իրմէ յառաջ մեռնող եղբորը զաւակներն և նոյնպէս իրմէ յառաջ մեռնող քորք զաւակները, եղբոր զաւակունք կը ժառանգեն կալուածը, իսկ եթէ միայն քորք զաւակներ կան, սքա կը ինին ժառանգորդ:

Ե. Թոռն՝ իւր հօր կամ մօր տեղ անցնելով, անոր ստանալիք բաժինը կը ժառանգէ իրմէ յառաջ մեռնող զաւակի զաւակ, այսինքն թոռն, կենդանի զաւակը կը ժառանգէ, թոռը չժառանգեր:

Զ. Եթէ վախճանեալը զկալուածը կտակած է, այդ կտակ չեղեալ կը նկատուի: Զ. Կրնայ վախճանելոյն կողմանէ կտակուած լինել և կտակը վաւերանայի է:

Է. Առանց միւրեւիտիւն կամ անոր օրինաւոր փոխանորդին նաւոր փոխանորդին ներկայութեան ու հաճութեան՝ և առանց կալուածատէրը վախճանած է, ժառանգարելի վախճ կալուածորդք պարտին յարծի վաճառում կամ գրքել վաճառումն և օնում ընել. ուստի այս րինաց պահանջած արպայմաններէ զուրկ գրքեալ վաճառումն և օնում կամ վաճառած լինելու խնդիրներն անընելի կը մնան:

Ը. Եթէ վախճանեալը զկալուածը կտակած է, այդ կտակ չեղեալ կը նկատուի: Ը. Կրնայ վախճանելոյն կողմանէ կտակուած լինել և կտակը վաւերանայի է:

Թ. Առանց միւրեւիտիւն կամ անոր օրինաւոր փոխանորդին նաւոր փոխանորդին ներկայութեան ու հաճութեան՝ և առանց կալուածատէրը վախճանած է, ժառանգարելի վախճ կալուածորդք պարտին յարծի վաճառում կամ գրքել վաճառումն և օնում ընել. ուստի այս րինաց պահանջած արպայմաններէ զուրկ գրքեալ վաճառումն և օնում կամ վաճառած լինելու խնդիրներն անընելի կը մնան:

Ը. Եթէ վախճանեալը զկալուածը կտակած է, այդ կտակ չեղեալ կը նկատուի: Ը. Կրնայ վախճանելոյն կողմանէ կտակուած լինել և կտակը վաւերանայի է:

ուածակալը պարտա- կան մեռնի, պարտա- տեարք չեն կարող ըս- տիպել զժառանգորդս որ կարուածը վաճա- ճարեն, հետևարար չեն ալ կարող գրաւել զայն:

Թ. Վախճ կալուածը ժառանգական գոյից մէջ չը մաներ և ըստ այնմի գիր չ'առնուիր հետևարար անոր ար- ժէից համեմատութեամբ ծախս չը վը- ճարուիր:

Ուրեմն սխալ է ըսել թէ այս ինչ վախճ կալուածը միւլի վերածուեցաւ, մինչ եղածը պարզապէս ժառանգական ստացման սահմանին ընդարձակումն է (Թէվսի ինքիգալ), և կարծեմք յոյժ կարևոր է կալուած ունեցողներուն՝ այս տարբերութեան վրայ ճշգրիտ գաղափար ունենալ:

Եւրաքոսական վերջին հրամանագիրն մահացու հարուած մ'եղաւ ոչ գրաւե ալ (ղայրը մալպուբէ) (1) կոչուած վախճի միւլի վերածու- լումն պահանջանաց ու յաւակնութեանց. այս միւլի վերածու- լումն ընդհանրապէս չէին ընդունիր ընդարձակումն գրութեանը՝ նկատելով որ այդու միւլս կը կրեն. միւս կողմէ օրէնքը բացորոշապէս ամէն վախճներն այդ գրութեան ենթակայ հոչակած էր. կը մնայր գործադրութեանը նախագործել և ահա յիշեալ հըրամանագիրն ազդեցութիւնն այդ կէտին մէջ է: Թեա այսորիկ ո ոք և կամի կրնայ իւր կալուածն ինչ տեսակ վախճի պատկանած լինի, ազատել յետ մահու կորստեան վտանգէն և ապահովել իւր թոռանց, ծնողաց, եղբարց, քերց ու ամուսնոյն նիւթական վիճակը, կատարելով օրինական ձևակերպութիւններն և վճարելով հարկ եղած ծախսերը:

Կը կարծեմք թէ այսպէս հասարակաց տընտեսական զարգացման պահանջան ու նպատիչ օրինական արամադրութիւններէն օգուտ քաղելու մասին ո և է դանդաղութիւն, ո և է անիւթութիւն ծանր և անդարմանելի վընասուց պատճառ է. փութացէք ուրեմն, կալուածակալք, Թէվսի ինքիգալ ընել ձեր վախճ կալուածները: Ա. Ա. ՍՈՒՐԵՆՆԱՆ:

Յ Ա Կ Ո Ւ Յ . Պ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

Երբ, չորս ամիսներ յառաջագոյն, փետր. 9 թուականաւ, Պարոնեան կը ծանուցանէր ինձ իւր հիւանդութիւնը զոր «պզտիկ տկարութիւն մը» կ'անուանէր, և երբ, երկու շաբաթներ վերջ՝ կ'ըսէր. «կատարելապէս ապաքինած եմ», բնաւ ի հաշիւ չ'էի առած զմահ որ յանակնկալս կը հասնի միշտ, անողք, ժանտաղէմ, հեգնածպիտ...»

Յուրտ և սաստիկ հողմ մը շնչեց այնուհետև և իւր առջեւէն հալածական վանեց տարաւ Պարոնեանի կեանքը:

Ողբացեալ մօրեղբորս և միանգամայն լաւագոյն բարեկամս յիշատակին քանի մը տողեր նուիրելու իղձս ի՞նչ կարող է ներշնչել յիս, երբ արդէն՝ Պարոնեանի հիւանդու-

ճանի կալուածատիրոջ, պարտատեարց կողմէն է գրաւուիլ ու վաճառու մէն գոյացեալ գումարը կը բաշխուի իրենց մէջ. յաւելեալ մասը կը մնայ ժառանգորդաց:

Թ. Ի հարկին Շէրիի կողմէ ժառանգական գոյից ի գիր առնուած ատեն՝ միւլի կալուածներն ալ կը նշանակուին իրենց դներով և հարկ է այդ գնոց համեմատութեամբ ծախս վը- ճարել:

Թեան միջոցին՝ Ա. Ա. Սուրէնեան աստանօր իսկ այնքան լաւ ճշգեց նորա նկարագիրն, այնքան ուղիղ սահմանեց նորա դերն ու հանճարը: Երբ՝ մանաւանդ՝ սիրեցեալ երգի- ծարանին դադարին առջև խօսեցան մեր գրականութեան երկու փառաւոր ներկայացուցիչք՝ ի վեր հանելով զոր ինչ նմա կը վերաբերէր, ինձ պարտ էր լռել կամ կրկնել:

Պիտի կրկնեմ ուրեմն, զի խնդիրը Պարոնեանի վրայ է:

Յոյց տալու համար թէ Պարոնեան ստուերի մէջ չէր ծնած, ինձ չսրտկանիր գրել իւր ազգաբանութիւնն որ պիտի լինէր նաև իմս: Այդ պաշտօնն այլոց կը թողում, եթէ երբէք հարկ կայ: Սոկրատոյ հայրն համեստ քանդակագործ մ'էր և մայրը՝ դայեակ:

Մարդիկ կան որոց մեծագոյն թերութիւնն է, ո՛չ թէ դաւառի մէջ ծնած լինել, այլ՝ գաւառական սահմանափակ կեանքով և անձուկ միջավայրի մը մէջ ապրելու դատարարութիւլ: Պարոնեան՝ որ ի տղայ տիոց գիտակցութիւնն ունեցաւ իւր երգիծական տաղանդին, խոյս տուաւ այս դատարարութեան: Ազգիանուպոլսոյ միջնորդը հեղձուցիչ գաւառ և զգոց թէ իւր տաղանդը գուցէ իւր կեանքն իսկ պիտի թօշնէին անդ: Ուստի՝ հաղիւ քսանհնգամեայ՝ արհամարհելով ամէն գործ որ քաղաքիս մէջ պատրաստ կար իրեն համար, չուեց դէպ ի մայրաքաղաքն, զարգանալու և սզատ սպրելու յուսով: Ո՛չ իւր մօր արտասուքն, և ո՛չ իւր համայն ընտանեաց թախանձագին ազերսանքն կարողացան փոխել տալ նմա իւր որոշումն որ անդառնալի էր:

Եւ այս որոշման կը պարտիմք թերևս ազգին առաջին երգիծարանը:

Անկանոն և տառապալից կեանք մը՝ յատկանիչն է եղական անձնաւորութեանց: Արգարև, երբ մարդ կ'արհամարհէ զմիջակութիւնն, հարկ է նաև որ առ ո՛չ ինչ գրէ ընկերական շատ մ'սկզբունք և օրէնք: Եւ այն որ հանճարի ծնունդ տալ կ'ուզէ, մանաւանդ առ մեզ, պարտի երկունք կրել ընդ երկար և տառապիլ անհնարին ցաւերով:

Եւ Պարոնեան՝ տառապեցաւ երկար տունն, որովհետև չէր ուզեր միջակ կեանք մը վարել և կը նախընտրէր անկանոն և թշուառ, բայց ազատ, պատուաւոր, անկեղծ և ճշմարիտ կենցաղավարութիւն մը: Զերծ ի փոքրկութենէ և հեռի գձուձ շահեր որոնելէ, ինքզինք երջանիկ կ'զգար իւր տառապանաց մէջ: Բայց ինչ երջանկութիւնն է նախ հեռագրատան պատճենաց, ապա ուսուցիչ, պահ մը դերասան (կարծեմ) և յաջորդաբար առեւտրական և ազգային պաշտօնեաց, խմբագիր և հեղինակ, Պարոնեան՝ իւր ամբողջ կեանքը մաշեց աշխատութեան ահագին քանակութեամբ մ'որոյ փոխարինութիւնն հազիւ ջամբեց զինքն և իւր ընտանիքը:

Երբ՝ Ալֆրէտ տը Միւսէ՝ իւր «Մայիսի Գիշերն» ի մէջ այն անմահ տողերով կը նկարագրէ զհաւալուսն որում կը բաղդատէ բանաստեղծները, կարծես մեր գրական մարդոց կեանքը կը պատկերացնէ:

.....

Elles tracent dans l'air un cercle éblouissant, mais il y pend toujours quelques gouttes de sang! Հաւալուսն՝ որ առ ի չգոյէ անդեան՝ իւր սիրտը կը պատառէ և իւր ընդերքը կը կերակրէ իւր ձագերը, մի՞թէ չը բաղդատուիր մեր աշխատաւորաց հետ, ոյք իւրեանց արեամբ կը գնեն սակաւ ինչ կեանք

և փառք: Միթէ՞ արեան կաթիլներ չ'կան Ազգային Զոջեռու և երկարներու էջերու վըրայ:

Կերազանցապէս նիւթապաշտ ժողովուրդ մ'եմք: Բնապաշտական մատենագրութիւնն ևս ընդունած եմք արդէն, բայց նախ քան զամենայն՝ իտէալի անհուն քանակութեան մը պէտք ունիմք: Աշխարհիկ լինելէ յառաջ, պարտ է մեզ գնահատել գիտնալ մեր մարդիկը:

Եւ՝ ազգային գրականութեան այս անխոնջ աշխատաւորն հանապազ հաստատ նկարագիր մ'ունեցաւ և կատարեալ ողջմտութիւն և համեստութիւն ցոյց տուաւ իւր ամէն գործոց մէջ: Իւր գրական կեանքը, մանաւանդ, տիպար հանդիսացաւ հրապարակագրական պատուոյ և անաչառութեան: Նոքա որ ի մօտոյ չ'են ճանաչեր զՊարոնեանն, նոքա որ իւր գրութեաններէն միայն կը գտան զնա, այն ամէն դասակարգի ազգայինք, դրագէտք, ազգային ներկայացուցիչք, կրօնաւորք և մեծատունք, որոց «անախորժ ճշմարտութիւններ» ըսած է, կը խորհին թերևս թէ կարի դաժան եղած լինի Պարոնեանի բնաւորութիւնը: Ո՛րքան պիտի սխալին:

Պարոնեանի մտերիմք և ծանօթք գիտեն թէ քանի՛ հեղահամայր և խոնարհ մարդ մը էր Պարոնեան, Մեծ մարդոց նկարագիրն էր որ կը փայլէր իւր անձին վրայ: Պարզութիւնն և անձնուրացութիւնը կը բազմէին իւր հոգւոյն մէջ: Իւր ընտանեաց և բարեկամաց համար ամէն զոհողութեան յանձնառու, պատրաստ՝ իւր շապիկը փոխ տալու խնդրողին, յամենայնի կը մոռանար իւր անձը: Մարդ չէր նա, կարծես. այնքան քիչ էր իւր ինքնասիրութիւնն: Իրաւ է որ, աշակերտ Դիոգենէսի, անձնուրացութիւնը յաճախ կը մղէր մինչև շնականութիւն: Անձնական հաշիւ կամ հանգիստ, անիմաստ բառեր էին Պարոնեանի համար: Սովաւապետ, համեստ և համբերատար, կը ննջէր անդ ուր էր և ցնցոտիներ կ'ազանէր յաճախ: Աշխարհ փոխուած է և արդի իմաստասէրք և գիտունք նոյնքան խղճամիտ են իրենց անձնական մասին ո՛րքան աշխարհիկ անձինք՝ և նոցա շահերը կը նմանին մեր շահերուն: Բայց կայ միշտ հին ժամանակաց բարոյական նկարագիր մը զոր պարտ է յարգել յաւէտ, և զոր առաքինութիւն պիտի կոչեմ: Եթէ կայ բան մ'որ աւելի մեծ է քան Պարոնեանի հանճարը, այն է իւր ինքնատիպ, իմաստասիրաւսեղ և հետաքրքրաւոր ձևարարը:

Անհաշտ թշնամի կեղծաւորութեան և նենգամտութեան և սիրահար բարոյ և ճշմարտին, Յորնաղի մտրակն և Ռապուլէի ծիծաղը փոխ առաւ ձաղկելու համար անխնայ զոր ինչ սխալ ուղղութեան մէջ կը տեսնէր և համարձակեցաւ ի յայտ հանել ճշմարտութիւններ որոց վրայ ո՛ր է գրող մը պիտի վարանէր խօսելու: Երգիծարան նոյնքան լեզուաւորքան գրչաւ, իւր խօսակցութենէ կը բըղջիւնէ շահեկանութիւն և իմաստասիրութիւն ու իւր համոզումք այնքան ուղիղ և իւր եզրակացութիւնք այնքան բնական էին որ հիացում կը պատճառէին, և Պարոնեանի հետ խօսակցելով՝ մարդ կ'զգար թէ մեծ խորհող մ'է իմաստասիրութեան հոյակապ ուսուցիչ մը կայ իւր առջև: Կարելի է սակայն որ իւր կարծիքներէ ոմանք չարազանցեալ եղած լինին ներկային մէջ: Բայց ո՛ր գիտէ թէ ապագայն իրաւունք չը՞ պիտի տայ Պարոնեանին: Պարոնեանի գործոց վրայ կանոնաւոր, ան-

(1) Տես ՄԱՂԻԿ ԹԻՒ 37.

կեղծ և անաչառ քննադատութիւն մը կարէ լոյս սփռել այս պարագային վրայ, և փափաքելի է անշուշտ որ մեր գրական անձնաւորութիւններէ մին ստանձնէ անգուգական երգիծարանին բոլոր հեղինակութիւններն ուսումնասիրութեան տարկայ ընելով գրադեւու աշխատութիւնն որ յոյժ կարեւոր է ազգային գրականութեան տեսակէտով:

Եւ երբ մարդ կը խորհի թէ այնքան երկար ատեն Հայ գրական հրատարակին իշխանն հանդիսացած այս անձնաւորութեան հմուտութիւնն չէր հաւասարեր անշուշտ բազում այլ գրագիտաց ծանօթութեանց քանակութեան, հարկ կ'ըզայ խոնարհելու հանճարին առջև: Ապաքէն՝ ո՛չ պատմութեան կամ իմաստասիրութեան, ո՛չ հայկական կամ օտար մատենագրութեան մէջ Պարոնեան հաւասար կարողութիւն ունէր մեր գրական մարդոց ու մանց հետ: Այլ ի՛նչ փոյթ: Նա գիտցած էր խուզարկել ամէն ազգաց մատենագրութեան մէջ և լուսագոյն աղամանդները դուրս հանել, ի բաց թողով աւելորդը: Առանց օրն օրին հետեւելու գրական, ազգային կամ քաղաքական աշխարհի փոփոխութեանց, գիտէր ի հարկին՝ այսպէս ըսեմ, կատարեալ ձեռնհասութեամբ ճառել ամէն կարգի խնդրոց վրայ, և չափազանցութիւն չը լինիր եթէ ըսուի թէ իւր դատողութիւնք ճիշդ էին գրեթէ միշտ: Կեանքի մէջ — և թերևս կեանքէն անդին — արգասի աշքերով կը նայէր և իւր հզոր իմացականութեամբ կը թափանցէր « իրերու հոգւոյն », որպէս կ'ըսէ Իւկո: Իւր թափանցիկ մտքն կը խորհէր ամէն ուրեք և ամէն առթիւ:

Պարոնեանի առաջին հեղինակութիւնն եղած է « Երկու տէրով ծառայ մը » անունով կատակերգութիւն մը: Երբ՝ երկու տարիներ յառաջ՝ սոստ մնացած իւր մանր մունր գրքերու մէջէն գտնելով այս ձեռագիրն իրեն յանձնեցի, ուրախութեան և միանգամայն արհամարհանաց ժպիտ մ'ունեցաւ իւր առաջին տարիներու այս գործոյն վրայ, յորում, սակայն, կ'ըզացուէր արդէն կատակերգական նուրբ ճաշակ մը: Եթէ չուզեց այս գործը հրատարակութեան տալ, պատճառն այն է անշուշտ որ՝ գիտէր թէ ինչ ըսել է լաւն ու կատարեալը: Բնաւ կամ շատ քիչ անգամ խօսած է « Առաջնորդին Արևելեան » վերայ, իւր երկրորդ գործն որ կը բաւէ միջակ թատերագրի մը, ի՛նչ կ'ըսեմ, տաղանդաւոր հեղինակի մը փառքը կազմելու: Զգիտէր թէ Մեկուներով պիտի սկսէր, թաւսնով ի յայտ պիտի գար, Ազգային Ջոզերով պիտի անմահանար, թէ Մեծապատիւ մուրացկաններն, Պոյոյ մը Կ. Պոլոյ բազմունի մէջ և Ծիծաղի երգիծական հրաշալի արտադրութիւններ պիտի լինէին, օգտակար և հրահանգիչ, և թէ վերջապէս խիկարներու մէջ պիտի գերազանցէր զ'Ալֆօնս Գոսս, թէ խիկարներն նոյնքան պիտի սպրին թերևս սրբան Ազգային Ջոզեր: Եւ Պարոնեան կը սիրէր խօսիլ երբեմն համեստ գոռոզութեամբ իւր լուսագոյն արտադրութեանց, մանաւանդ Ազգային Ջոզերու և խիկարներու ինչ ինչ կ'ըրու վրայ: « Երբ « Մամուրեան, — կ'ըսէր ինձ օր մը — կարգաւցած է Ազգային Ջոզերու առաջին մէկ քանի « կենսագրութիւնները, կարծիք յայտնած է « թէ չը պիտի կրնամ մինչև վերջն այն բարձրութեամբ և պարզութեամբ շարունակել, « և զարմարացած է ընդհակառակը տեսնելով »: Ա. դարև ո՞վ պիտի տայ մեզ այսուհետև Ազգային Ջոզերու նման դասական գլուխ գոր-

ծոց մը, ո՞վ պիտի գրէ մեզ խիկարներու աշխարհարարն և ո՞վ այս թերթերու մէջ փայլող գրական և քննադատական գոհարներով պիտի զարդարէ մեր գրականութիւնը:

Առանց բանարարել ուզելու մեր տաղանդաւոր գրագիտաց իրաւունքն և մտանալու այն ծառայութիւններն զորս կը մատուցանեն ազգային գրականութեան, արդար է ըսել թէ Պարոնեան գերազանց գրագէտ մը, մեծ բարոյախօս և քննադատ մը և իւր ժամանակին առաջին հանճարը հանդիսացաւ: Ոչ ոք հաւատարեցաւ նորա մեծութեան և ոչ ոք պիտի հաւասարի թերևս այսուհետև ևս:

Ազգն զգաց իւր կորստեան կարեւորութիւնը: Եթէ Պարոնեան երկար ատեն սուրէր տակաւին, հայ գրականութիւնն « անմահ փառք պիտի փառաւորուէր », որպէս ըսաւ Սուրբնեան: Իմաստասիրական, քննադատական և բարոյական հրաշակներուն պիտի արտագրէր, և ի պատրաստի ունէր արդէն մի քանի յատակագծեր որոց մէջ « Կին իրրեւ գեղ » խորագրով վէպ մը, և յորում պիտի ուսումնասիրէր, որպէս կ'ըսէր ինձ անցեալ տարի, արուշներու (idiot) ընկերական կացութիւնն և այս կացութեան հետեւութիւնները:

Մահն իւրացուց զՊարոնեան և փճացուց նորա խորհուրդները: Մեզ պարտ է այսուհետև յարգել իւր յիշատակն:

Մահուան և թշուառութեան վրայ շատ կը խօսէր քանի մը տարիներէ հետէ: « Արդեցի որ այսուհետև հարուստ թաղ մը երթամ ընակիմ », — կ'ըսէր ինձ անցեալ յուլիսին —, խեղճութեան տեսքը մարդուս սիրտը կը ճմլէ կոր»: և նոյն ժամայն կ'սկսէր տաճիկիէն երգի մ'առաջին տղերք: Արիչ օր մը. « Ի՛նչ կը կարծես որ ըլլայ. մեր կողմուածքի մարդիկ ամենաթեթեւ հիւանդութեան չեն կարող ստիպալ ամէն օր վտանգի մէջ եմք »:

89 յուլիսի երեկոյ մը յՕրթագիւղ գրասարանի մը մէջ, ուր ներկայ էին իւր բարեկամք Գուրգէն, Սէթեան և Մոզեան, հիւանդութեանց և մահուան վրայ կը խօսակցէինք: Մոզեան քիչ օրեր յառաջ մազապուր զերծած էր ծանր հիւանդութենէ մը և Պարոնեան կ'ըսէր. « Մահուան այնքան մօտ երթալէ վերջ, ետ դառնալն խնձրութիւնն չէ՞ մի, բարեկամ »:

Եւ ինքն ևս չը դարձաւ:

Պարոնեանի պատը, « Յակորջան աղա Ուզուն քէ օրրիւլիւ », կը հանգչի ի Ռասգիւղ, իւր հօրերարորդին՝ Տօքթէօր Յովհաննէս Քեաթիկոսեան — ուրիշ հանճար մը — ի Ֆէրիզի: Պարոնեան ուզեց հանգչիլ այս երկու նշանաւոր անձնաւորութեանց մօտ... Հանգեալ ի Տէր 1891 Մայիս 27ին յՕրթագիւղ և ամփոփուեցաւ տեղւոյն գերեզմանատան մէջ⁽¹⁾

Ա. Պոլոս, Մ. Յ. ՍԱՆՏԱԼՃԵԱՆ
4/16 յունիս 1891

(1) Զը գիտեմք թէ գործի սկսաւ այն յանձնաժողովն որ պատուաւոր ազգայիններէ կազմուած էր Պարոնեանի որոց սպազայն ապահովելու համար: Պարոնեան հայ գրականութեան ամեն փայլուն ստղն եղած լինելով, կ'արժէ աշխատել ի գլուխ հանելու այդ ձեռնարկ: Կ'արժէ նաև յատուկ յանձնաժողով մը կազմել վերստին հրատարակելու համար Պարոնեանի բոլոր գրուածներն որ սպառած են մեծու մասամբ, ինչպէս նաև ի լոյս ընծայելու համար անտիպ ձեռագրած ձեռագրերն: Այս առթիւ կը յայտարարեմք թէ ազգովին շնորհակալեաց արժանի հանգիստացած է վաճառական տարիներ համարակալի պաշտօն կը վարէր Պարոնեան, ոչ միայն վասն զի ի կենդանութեան օգնեց համակրելի գրողներն իրն համար գնելու փոքրիկ տուն մը, այլ վասն զի ապա վեհանախարար վճարեց նաև հիւանդութեան ժամանակի բոլոր ամսականներն, երևոյթ մ'ար կրնայ ըսուիլ թէ եզական է մեր վաճառական դասուան մէջ.

ՀԱՆՈՒՒՆՔ, ՀԱՆՈՒՒՆՔ

Հնչեց վերջապէս հանուելու ժամն որուն անհամբեր կ'սպասէին բազում ցաւագարներ, ախտաժէտներ, անդամալոյծներ, վատուծներ, այսահարներ, արք և կանայք, ծերք և աղայք:

Բայց մի՛, Տեարք իմ և Տիկնայք, պճնաւորութեան կատարը բարձրանալէ յետոյ մէկէն ի մէկ մերկանանք և նետուինք Պոսիգոնի գիրիլը:

Պոսիգոն վատ ուհիլի աստուած մը չէ, աստուածներուն ամենէն փոփոխամիտն է:

Պոսիգոն աստուածներուն ամենէն խայտառակն է:

Կանխահոգ զգուշութիւններ ձեռք առնելու է մտնալն առաջ ծոցն այս աստուածին որ, չկարծէք թէ միայն ճշմարտութիւնը մերկ անտնելով կը շատանայ. այս աստուածն ստեղծելի հոգիակորութիւն ունի հագուած վաճառողներու դէմ:

Ես ալ կը փափաքեմ թէ զիտի անկողինը մտնել ահիւ և երկիւղիւ, զովանալ, դողալ, հիանալ, սքանչանալ, և բնութեան ամենէն գեղեցիկ հրաշակերաբ վայելել, մէկ խօսքով ես ալ կը սիրեմ ծովը:

Մանաւանդ կ'ուզեմ դիտել ծովը, բայց ոչ ծովեզերեայ անտառի մը կանաչագեղ ծառոց հովանոցն տակ ու ծաղկաւէտ մարգագետնի վրայ ընկողմանալ, այլ կ'ուզեմ ծովեզերքը բարձրաձեւ լճուտ ապառաժներու կոյտի մը ստուերին ներքև՝ խիճերու վրայ սլակած և ժայռի մը վրայ գլուխս հանգչեցուցած: Չեմ սիրեր ծովուն դաշտացումն, ոչ ալ կ'ախորժեմ անոր հեղուկ և յեղյեղուկ լեռներէն: Հաճելի է ինձ երբ հեզասիւզ զեփուան մեղմիկ փշելով, ալեակներէ փոքրիկ ախօսներ կը գործէ, որք դանդաղ ի գիլ առ իս կուգան և խիճերու մէջ մանկելով կը դըրչան և ոտներս կը խաղտեն:

Բա՛ստակըծներն իրաւունք չունին, կարծեմ, բողբոջել ինձի դէմ:

Իսկ երբ ծով մտնել ուզեմ, առանձին կը մանեմ: ոչ զօք կ'ուզեմ հետս, ոչ իսկ արեւն որու հետ քանի մ'անգամ կուր ըրած եմ ինձմէ առաջ մտած ըլլալուն համար: Մոլութիւն մ'ունիմ որ է. կ'ուզեմ որ իմ ելնելու պահուս մտնէ արեւն կամ իմ մտնելու ժամանակս ելնէ: Քանի մ'անգամ միայն լուսնի և աստղերու հետ լուսացուած եմ: Առանց ալընկերութեանէն բան մը հասկցած չեմ: Արեգական և երկրի աղջկան հետ կը սիրեմ ես լուսանալ. երբեմն ալ Արուսեակի հետ կը մըտնեմ ծով և ուրախ եմ թէ ճաշակս լիովին կը համաձայնի Ասկղեպիոսի աշակերտաց կարծեսը:

Այո՛, շատ կը սիրեմ ծովը և եթէ հնար ըլլար ծովու մէջ սուրիլ, բնաւ չպիտի ելնէի ցամաք:

Բայց հերիք մեր անձին վրայ խօսեցանք: Հանուեցէ՛ք, Տեարք իմ և Տիկնայք, քիչ մ'ալ ձեր վրայ խօսինք:

Լողայէ՛ք տեսնեմ:

Լաւ է լողալ ծովու մէջ քան պարտքի մէջ:

Բայց զգուշացէ՛ք խղուելէ թէ՛ միոյն և թէ՛ միւսին մէջ:

Միջին դասու մարդիկ կամայ սկամայ լողալ կը սովորին, հարուստներն են որ կամ հարուստ կարծուածներն են որ իրենց տունը պանեօ կ'ընեն... պարտքի մէջ, վախճալով որ չխղուին:

Մազ մնաց որ պիտի մոռնայի ըսել թէ ա-



բարոյութիւններ կան կատարութիւնք ծով մտնելէ առաջ: Չչիտթեք արանց արարողութիւններն կանայց արարողութեանց հետ:

Եւսերիոս ազան առաջին անգամ ըլլալով ծով պիտի մտնէ այս տարի: Իւր այս խորհուրդը կնկան կը յայտնէ: Կնիկը խրատ կուտայ էրկանն որ նախ և առաջ բժշկի հաւանութիւնն առնէ, զի մի գուցէ յետինն չար քան զառաջինն ըլլայ: Եւսերիոս ազան կը հընազանդի: Հետեւեալ օրը կը ներկայանայ բըժշկին որ կը հարցնէ:

- Ի՞նչ ունիք, Եւսերիոս ազա:
- Ոչինչ, ծով մտնել կ'ուզեմ:
- Ինչո՞ւ:
- Տկարութիւն ունիմ քիչ մը, ակորթակ չունիմ ուտելու:
- Ծատ աղկի կ'ըլլայ, զեղ մ'ալ տամ քեզի:
- Տուէ՛ք:

Քանի մ'օր յետոյ Եւսերիոս ազան, զենջակը թեւին տակ, կը մտնէ ծովու բաղնիքին դռնէն:

- Հրամայէ՛ք, Եւսերիոս ազա, հրամայէ՛ք, Եւսերիոս ազային օթեակ մը բացէ՛ք, լաւ օթեակ մը, լայն օթեակ մը:
- Եւսերիոս ազան կը մտնէ օթեակը:
- Եւսերիոս ազային վարտիք մը տուէ՛ք, լայն վարտիք մը:
- Ես զենջակ ունիմ:
- Ղենջակը պարսպ բան է, վարտիք հագէք որ հանգիստ ըլլաք:
- Ամօթ չէ՞ իմ տարիքիս...
- Ամօթն ի՞նչ ըսել է, աս ալ նոր կը լըսենք կոր:

Եւսերիոս ազան կարճ վարտիքով կը ներկայանայ հանդիսականաց: Օթեակէն կ'ընէ չեւեր, գիտողութիւնները կ'սկսին:

- Աս ի՞նչ կսկիւր մարդ է:
- Գոմէչ կը նմանի:
- Սրտը թեւերը նայէ:
- Հապա՛ ծոծրակը, մեր քալիլինին չափ կայ:

— Եւսերիոս ազան, որ կը լսէ բայց չստելու կը դարնէ այս գիտողութիւնները, կամաց կամաց կը մտանայ լողարանի սանդուղին, մէկ, երկու, երեք աստիճան կ'իջնէ, չորրորդ աստիճանին կանկ կ'առնէ:

Քաջալերական խօսքեր կ'սկսին ուղղուել իրեն:

- Եւսերիոս ազա, մի՛ վախնար, մտի՛ր:
- Եւսերիոս ազա, նախ գլուխդ խօթէ, վերջը սաքերդ:
- Գլուխովը ի՞նչպէս քայլէ մարդը...
- Մէկէն ի մէկ նետուէ՛:
- Վերէն վար ցատկէ՛:
- Վարէն վեր ցատկէ՛:
- Քովընտի նետուէ՛:
- Դուն ինձի մտիկ ըրէ՛, Եւսերիոս ազա, կանակիդ վրայ նետուէ՛:
- Ատոնք պարսպ խօսքեր են, Եւսերիոս ազա, գլուխդ թըջէ՛ ու կամաց կամաց մտի՛ր: Եւսերիոս ազա բնաւ չպատասխաներ այս ուղերձներուն, մերթ ընդ մերթ մէկ սաքովը ջուրը քիչ մը կը քերէ և նորէն ետ կը քաշէ:
- Մտի՛ր, Եւսերիոս ազա, եթէ պիտի մտնես հիւանդ պիտի ըլլաս:
- Ինչո՞ւ կը վախնաս կոր մարդ, չե՞ս խօսիլ, աղայ՞ ես...
- Ինչո՞ւ կայներ ես հոն իշու պէս, կը պօռայ անդիէն չափահաս մարդ մ'որ խօսքը չնայեր բնաւ:

Եւսերիոս ազան կը ցնցուի:

- Ի՞նչ իրաւունք ունիս, կ'ըսէ, անվայել խօսք ընելու:
- Լու՛, իշու կտոր, շատ մի՛ խօսիլ, կը կրկնէ ուրիշ մը:
- Աս ի՞նչ ըսել է, մենք հոս լուացուելու եկա՞նք թէ...
- Բաղնիքի մէջ ասանկ խօսքեր ներելի են Եւսերիոս ազա, կատակ կ'ընեն կոր:
- Ասանկ կատակ չեմ ուզեր ես:
- Երկար ըրիր ա՛, կ'ըսէ չորեքտասանամեայ չարածճի մը և կից մը տալով Եւսերիոս ազային մէջքին, ջուրի մէջ կ'ընկղմէ Եւսերիոս ազան: Քանի մ'անգամ Եւսերիոս ազան օտները ու վարտիքը ցոյց տալն ետքը՝ դըժուարաւ կը յաջողի կանգնիլ ջրոյ մէջ և լողարանի մէջ տեղը կայնելով կ'սկսի պօռալ:
- Աս ի՞նչ խայտառակութիւն է, ի՞նչ լրբութիւն է աս... օտտիկան չկայ՞ մի հոս... Հանդիսականք կը խնդան:
- Ինչո՞ւ կը խնդար կոր, ի՞նչ կայ խընդալու, ես ձեր խաղալիքն եմ, չէ՞ք ամենար, չէ՞ք խօսիլ դուք:
- Քա՛հ, քա՛հ, քա՛հ, քա՛հ...
- Ինչո՞ւ կը խնդար կոր...
- Քա՛հ, քա՛հ, քա՛հ, քա՛հ:
- Տէր Աստուած, տէր մեղայ...
- Փորձանքի պիտի հանդիպինք...
- Քա՛հ, քա՛հ, քա՛հ:
- Ինձի ալ ըսէք ես ալ խնդամ:
- Քա՛հ, քա՛հ, քա՛հ:

Եւսերիոս ազան կը դողայ, ակայներու կրճատումն կ'սկսի: Վերոյիշեալ չարածճին ջուրին տակ սուզուելով՝ կամացուկ մը կը մտանայ Եւսերիոս ազային, անոր ստքը վեր կը վերցնէ և գլխի վայր կը դարձնէ Եւսերիոս ազան որ իւր բոլոր ճիզը կ'սպառէ գլուխն ի լոյս ընծայելու համար:

Աւազանին մէջ դանտուղներն կ'սկսին իրենց ափով ջուր սրսկել Եւսերիոս ազային երեսը, կը դողայ Եւսերիոս ազան:

- Ձէ... չէ... չէք ա... մէ... մէ... նա... նա... նա... նար...
- Ա՛ս ինչ թօհաֆ մարդ է եղեր...
- Վայ ասանակ վայ, կը դողայ կոր տէ դուրս չելլար կոր...
- Ես թօ թօ թօ...
- Հա, հա, հա, հա...
- Թօ թօ թօ հաֆ դուք էք...

Բարձրագոյց քահանայ մը կը թնդացնէ լողանիքը:

Եւսերիոս ազան դողալով դողողալով կ'եւրէ աւազանէն և կ'ապախինի իւր օթեակը: Բաղնեպանը կը կանչէ:

- Ի՞նչ խայտառակութիւն է աս:
- Ի՞նչ եղաւ, բա՞ն մը եղաւ, ըսէ՛, ստքդ պագնեմ:
- Հոս չէ՛ր դուն:
- Հոս էի... արժանապատուութեանդ դպան, ըսէ որ վրէժդ լուծեմ... ես չեմ ուզեր որ բաղնիքիս մէջ անկարգութիւն ըլլայ, շահուս կը դպչի:
- Ձիմացա՞ր եղածները:
- Իմացայ, բայց վիրաւորուելու բան մը չտեսայ:
- Ետեւէս հրեցին ջուրի մէջ:
- Կատակ է անիկայ, իրարու կ'ընեն ասանկ բաներ:
- Աւանակ ըսին...
- Աւանակները ջուրէն կը վախնան տէ ատոր համար: ատոր մէջ բարկանալու բան չկայ:

— Երեսս ջուր նետեցին:

- Աւազանի մէջ կ'ըլլայ ատանկ բաներ: նայէ հիմայ կ'ընե՞ն կոր:
- Այնչափ խնդացին վրաս:
- Վազ անցիր, աստուածդ սիրես, սիրտըս դող հանեցիր, ես ալ կարծեցի որ դըպչելիք խօսք մը ըրեր են քեզի:
- Ըսել է որ ասոնք դպչելիք բաներ չեն:
- Անենին ատանկ բան մը մտքէդ անգամ մի՛ անցուներ: Հէ՛մ ուրիշին ալ մի՛ ըսեր, վրագ կը խնդայ:
- Ծնորհակալ եմ տուած բացատրութիւններէդ, բայց աւելի աղկի չըլլա՞ր եթէ հոս մարդ չգտնուած ժամանակը զամ ու լուացուիմ:
- Մինակ չես ձանձրոնար նէ եկուր:

Եւսերիոս ազան կը հագուի և կը մեկնի: Այնուհետև կ'սկսի ամէն առաւօտ կանուխ լուացուիլ:

Անցնինք այժմ կանանց կողմը:

Ծովը կանանց համար զրօսանք մ'է:

Ծովը կանանց գեղեցիկութեանց ցուցահանդէսն է: Հոն կանայք իրարու ցոյց կուտան իրենց գեղեցիկութիւնը:

Տգեղ կանայք ծով չեն մտներ բնաւ, կամ եթէ երբեք մտնեն, իրենց հագուստը չեն հաներ:

Ամէն պարագայի մէջ, ծովը՝ որ գեղեցիկ է՝ գեղեցիկներու համար սահմանուած է: Ես ալ չպիտի ներէի բնաւ որ տգեղ կին մը տըգեղացնէ ծովը: Ի՞նչ մեղքս պահեմ:

Գեղեցիկ կանայք ծով կը մտնեն ոչ թէ դարմանելու համար իրենց տկարութիւնն, այլ հիւանդանալու համար: Հերթը է որ ըսուի: — Ի՞նչ մարմին ունի:

Ծովը կը շողքորթէ կիները, կ'աւելցնէ անոնց գեղեցիկութեան փայլն, հարիւրապատիկ գեղեցիկ կը ներկայէ գանձը: և կնկան մը համար սակից աւելի ի՞նչ հաճոյք կ'ընայ ըլլալ:

Ծատ մը մայրեր ծովու մէջ հաւներ են աղջկան մը, իրենց հարս առած են և զըզջացած են յետոյ:

Ծատ կանայք իրենց մարմինը ծովու մէջ դիտելէն ետքը տուն դարձած և փշրած են հայելիները:

Այսպէս է ծովը, ոչ թէ միայն գեղեցիկ է, այլ կը գեղեցկացնէ նաև դայ՞ որ իրեն ծոցը կը մտնէ:

Կանայք միշտ կը խորհին թէ կարելիութիւն չկայ՞ արդեօք ծովու մէջ պարահանդէս ընել:

Բայց թողունք այս խորհրդածութիւններն և մտնենք կանանց բաղնիքը:

— Սա գիմացի կէնճը որո՞ւն աղջիկն է:

— Տէր սուրմեա, մայրի՛կ, չճանչցա՞ր, մեր դրացիին աղջիկը չէ՞:

— Ի՞նչ կ'ըսես... որքան փոխուեր է, ձիւնի պէս ճերմակ կ'ընճ մ'էր, սեւցեր է: Աստի կողմը կայնողն ո՞վ է:

— Մայրիկ, դուն խնդեցեր ես այսօր, ** աղային կինը չէ՞:

— Վայ մեղքիս... եթէ չըսէիր, չպիտի ճանչնայի, գիրուկ բան մ'էր անիկայ, չէօր դարձեր է նէ... սխալ ես աղջիկս, սխալ ես: Քիչ մ'անդին:

— Ծապիկդ ալ մի՛ հաներ, աղջիկս, շապիկովդ մտի՛ր, կը մտնայ, ջուրը պաղ է:

— Մայրիկ, շապիկով կը մտցուի՞:

— Ես ինչ կ'ըսեմ նէ՛ ան ըրէ՛, դուն նըճանուած չես տակաւին:

Ք Ր Ի Ս Տ Ի Ն Է


Քիչ մը հեռուն . . .
 — Գուլպաներդ մի՛ հաներ , աղջիկս :
 — Գուլպաներով կը մոցուի՞ :
 — Պօթիններդ ալ հագիր , ես վրուս :
 — Ի՞նչ կ'ըսեն :
 — Չիլիի վրայ կը կոխես , աղջիկս :
 — Պիտի հանեմ :
 — Հանն' ու երկար մատներդ ցցուր , վախ որ ասանկ բաներ չիլտես :
 Երկու մէկը ասդին . . .
 — Սանկ նետուէ նայիմ առիւծի պէս . . . ապրիս աղջիկս , ապրիս աղջիկս , համարձակ եղի՛ր . . . սանկ կռնակի վրայ լողա՛ նայիմ , մազերդ սիրեմ . . . պոյզ պոսդ սիրեմ աղջիկս . . . մաւալլահ . . .
 Բայց կիները զիրար չեն քաշեր , խըծր-ծանքը կ'սկսի . . .
 — Ի՞նչ մեղքս սուհեմ , կ'ըսէ մազերը թա-
 փած տիկին մը , սյաշափ երկար մազերէն չեմ
 ախորժիր , խազըլի պէս մազեր . . .
 — Պարէ աղուորս ըլլայ . . . միտն ուրիշ
 բան չունի :
 — Հապա տուտախները . . . բաշա տու-
 տախ . . .
 — Հապա աչքերը . . . հիշ աղուոր չեն :
 — Կէնձ է տէ , ատոր համար աղուոր կ'ը-
 սուի :
 — Կէ՞նձ մի , յիսուն տարու կայ անիկայ :
 — Հապա տկոսայները . . .
 — Հապա թեւերուն հաստութիւնը , հա-
 մալի թեւ կը նմանի :
 Չորս կանգուն անդին . . .
 — Չմոնա՞ս , աղջիկս :
 — Պիտի մոնամ :
 — Մտի՛ր , նազիկ աղջիկս :
 Խծրձանքը կ'սկսի . . .
 — Աս ալ հիշ միս չունի :
 — Ատոր ալ մազերը երկար են , փատի պէս
 մազեր :
 — Աչքերն ալ որչափ սե են . . . քէօմիւր-
 ճի խանութէն ելած է կարծես :
 — Ակոսայները շատ սպիտակ են . . . հի-
 մա մախպուլ չէ՞ ճերմակ ախոսայները :
 Դիմացի կողմը . . .
 — Քա վախս ի՛նչ էր . . . աս նետուողը
 ո՞վ է :
 — * * * աղային կիկին է :
 — Այդ կարիճին կի՞նն է :
 — Այո՛ :
 — Քա ատոր ի՞նչին հաւնեցաւ տէ առաւ :
 — Հինդ հազար ոսկի դրախօմա տուաւ
 աղջիկը :
 — Վահ , վահ , վահ . . . սատանայ կը նը-
 մանի նէ :
 — Մէյ մ'ալ էրկանը հարցուր :
 — Սա թրախօմայով կին առնողներն ի-
 րաւ որ խենդ են . . . քա այս ոսկորը կը կըր-
 ծուի՞ :
 Հագուեցէ՛ք , տիկիններ և դուրս ելէ՛ք :
 Դուրսը կ'սպասեմ ձեզի :
 Տիկիններն կ'սկսին հագուել և մէկիկ մէ-
 կիկ դուրս ելնել :
 Մտիկ ընենք այժմ ասոնց խօսակցութիւնը
 ճանրան :
 — Ուսկի՞ց կուգաք , տիկին :
 — Բազմիքէն :
 — Չտեսայ ձեզի հոն :
 — Դուք հո՞ն էիք որ :
 — Հոն էի հապա :
 — Ես ալ ձեզի չտեսայ :
 — Չարմանալի բան :
 — Իրաւ զարմանալի՞ :

Ուրիշ երկու տիկիններ . . .
 — Հոս պիտի տեսնուինք եղեր :
 — Խըմէթը ասանկ է եղեր , բազմիքին
 մէջ պէլքի ձեզի կը տեսնամ ըսի ամա , չտե-
 սայ :
 — Դուք բազմի՞ք էիք :
 — Այո՛ :
 — Ես ալ բազմիք էի :
 — Ի՞նչտոր կ'ըլլայ որ զիրար չտեսանք :
 — Դուք քանի՞ թիւ օթեակն էիք :
 — 8 թիւ :
 — Քովի օթեակն ալ ես էի :
 — Դո՞ւք էիք :
 — Չհագուած՝ խօսեցանքնէ իրարու հետ :
 — Խօսեցանք ես :
 — Ուղղ պագնեմ , աս ինտոր կ'ըլլայ քի . . .
 — Աս խնդալու բան է . . .
 — Խիկար չիմանայ :
 Խիկար գիտէ արդէն թէ կանայք ոմանք
 ո՛րքան փոփոխութիւն կը կրեն երբ փողոց
 ելնեն :
 Տակաւին շատ բաներ կան գրուելիք ա-
 բանց և կանանց բազմիքներու վրայ : Թերևս
 յաջորդ թերթին մէջ ևս քիչ մը խօսինք այս
 մասին : Այսօր կը վերջացնենք մեր սոյն յօդ-
 ուածն յանձնարարելով մեր ընթերցողաց և
 ընթերցողուխտեաց կամ ընթերցողանու-
 ցեաց որ ծովու մէջ խեղճ նստին , զիրար չը
 բամբասեն , զիրար չծաղրեն , լողալ չգիտցող-
 ներուն վրայ չխնդան , որովհետև Պոսիդոն
 չհանդուրժեր որ իւր իշխանութեանը մէջ
 այսպիսի գեղճուներն ի գործ դրուին :
 Մոզի շատ վեր է ձեր երեւակայած կա-
 պոյտ դաշտին , գեղեցիկ է նա , շնորհալի է ,
 փափուկ է , վաեմ է , մերկացէ՛ք ամենայն ինչ
 երբ ծովու հետ գործ ունիք : Անկեղծու-
 թեամբ մտէք հոն , օրօրուեցէ՛ք անոր փա-
 փուկ կուրծքին վրայ : Իսկ երբ բարկանայ՝
 կրակ կը կտրի—չուրը կարծեմ կրակ չկտրի ,
 բայց փրան չունի հոս— և իւր լեռնանման կո-
 հակներովն կը պատժէ զձեզ : Զգոյշ կացէ՛ք :
 Հանուինք ուրեմն և վայելենք ծովուն բա-
 րիքները , երբ հանդարտ է նա , երբ յստակ
 է , պայծառ է , ջինջ է , մաքուր է :
 Գոնէ սիրտերու կարօտը ծովն առնենք . . .
 շատոնց է որ մաքուր սիրտ տեսած չունիմ :
 Երթամ ուրեմն հանգչիլ իմ ապուռածիս
 վրայ և աղաչել Պոսիդոնին որ թոյլ տայ իւր
 հեղատահ ալեաց գալ առ իս , որոնց մէն մի
 դժգիւնն՝ որ Զեփիւռի չունին է , յոյս կու-
 տայ մահկանացուաց և որոյ մէն մի հրաժեշ-
 տը կը տանի ցաւ մը : Եւ դու քանի մ'օրէն
 պատրաստուէ՛ զիս դիմաւորելու , ո՛ տիկին
 Պոսիդոնի . պատիւ պիտի ունենամ մտ օրէն
 այցելել ձեզի կամ օրիորդ Արշալոյսին հետ
 կամ օրիորդ Արուսեակին հետ :
 Իսկ եթէ անձնական գործերս չթոյլատ-
 րեն զիս ծով մտնելու , այն ատեն պիտի ըս-
 տիպուելմ այցետոմսս խօթել ծովը . . .
 Ես և այցետոմսս մէկ ենք :
 (Խիկար) ՅԱԿՈՐ ՊԱՐՈՆԵԱՆ

Պատիկ աղջիկ մ'էր Քրիստինէ , կարմիր ա-
 ռած ուսին , կարմիր վառած այտերուն և գե-
 ղակարմիր վարդեր յեռած վարսիցն խարտի-
 շագեղ , երբ Մայիսի առաջին օրերուն , մայ-
 րիկին շուրջ , մայրիկէն յառաջ , բայց միշտ
 մայրիկին հայեցուածոց հսկողութեան տակ՝
 ոտտոտելով կ'երթար կոխկուռել երիցուկնե-
 րով ընդերուզեալ այն լայնատարած գորգն ,
 որ իրենց օղափոխութեան համար եկած բու-
 նիկէն ո՛չ շատ հեռի կ'երկարէր ու կ'ընդար-
 ձակէր մինչև հոն , ուր հացը , տակաւին իւր
 խանձարրոցը մէջ , կը տատանէր հեղիկ՝ շըն-
 չովն հողմիկին երեկոյեան :
 Ուրիշ շրջողներ կը տեսնէին զնոսա , կը
 հետևէին նոցա աչքով , և ամէն ոք կը խոս-
 տովանէր թէ Քրիստինէ ամէն մանուկներէ
 աւելի զուարթ՝ երջանիկ էր ամէն մանուկ-
 ներէ աւելի :
 . . .
 Որպէս ամէն տարի Մայիս կուգայ , նայն-
 պէս Քրիստինէ ամէն տարի Մայիսին հոն
 կուգար . բայց Մայիսն միշտ տարւոյն ման-
 կութիւնն է , մինչդեռ Քրիստինէ տակաւ մա-
 նուկ լինելէ կը դադարէր . ահա տարբերու-
 թիւնն որ Մայիսին ու Քրիստինէին մէջ կար-
 եղաւ որ տարի մ'ալ , երբ Քրիստինէ այցե-
 լեց այդ ծաղկազարդ դաշտին ու անոր գե-
 ղանկար գորգին , ո՛չ ևս էր իւր կենաց Մա-
 յիսին մէջ . ամբան պէս գեղճութիւն մ'ըս-
 կըսեր էր հազնիլ ա՛լ չէր ցատկեր , ա՛լ չէր
 ժպտեր շատ , և դաշտին միւս այցելուք ո՛չ
 ևս ժպտելով կը նայէին անոր . պատկառա՞նք
 կը թարգմանուէր այս թէ արգահատանք ,
 աղէկ մը չկրցի հասկնալ ի սկզբան . ինչ որ
 յայնժամ ակներև ճշմարտութիւն մ'էր ինձ
 համար՝ սա՛ էր թէ , ա՛լ քիչ զուարթ էր Քր-
 րիստինէ , հետևաբար և քիչ երջանիկ :
 . . .
 Հետաքրքրութիւնն գիւղացուոց առաջին
 յատկութիւնն է . ամէն տարի խնդրոյ նիւթ
 էր Քրիստինէ , որ ա՛լ պատանուհի մ'էր , որ
 ա՛լ բնաւ չէր ժպտեր , և ակնյայտնի կ'երևէր
 թէ մայրիկն անոր այս չարագուշակ փոփո-
 խութեան վրայ մտահոգ էր յոյժ : Տեսնելու
 բան էր ի՛նչպէս միշտ իւր նայուածքն անոր
 վրայ էին , ի՛նչպէս յաճախ այդ նայուածք-
 ներ արտասուաց կաթիլներէ կը ցայտէին
 դուրս : Եթէ երբէք Քրիստինէ , այդ պոյտ-
 ներու մէջ , պատահմամբ քայլ մի յետամնաց
 գտնուէր , մայրիկն երկիւղիւ կը դառնար յե-
 տքս , և կարծես զնա կորսնցնելու սուկումն
 էր որ միշտ կը պաշարէր այդ խեղճ մայրիկն :
 Գիւղացիք կը շնչէին իրարու . « Բան մը ունի
 այս աղջիկը » , չարամիտք՝ թէ Աստղիկ կը խօ-
 սի ի նմա , յոռետեսք՝ թէ մե՛ղք երիտասար-
 դութեանը . բայց ո՛չ ոք գիտէր ստուգու-
 թիւնը , միայն սա բացայայտ էր թէ Քրիս-
 տինէ ոչ ևս զուարթ էր , հետևաբար ո՛չ ևս
 երջանիկ :
 . . .
 1889ի Մայիսն ալ եկաւ , բայց Քրիստինէ
 ու իւր մայրիկը չեկան ի գիւղ յօղափոխու-
 թիւն . գիւղին շնորհքն , գիւղին համո հոտն
 դարձեր էին անոնք , հետևաբար՝ թէ և գիւղն
 այն տարի ալ իւր Մայիսն ունեցաւ , բայց
 ո՛չ ամենին իւր հրատարակ ու շնորհ , Հա-
 մայն գիւղացին , դաշտին՝ համակ այցելուք

Վ Ա Ր Ժ Ո Ի Հ Ի Կ Ո Ի Ձ Ո Ի Ի

Ռօտոսթոյի Ս . Թագաւոր Եկեղեցւոյ
 աղջկանց վարժարանին համար հայերէն լե-
 զուի հմուտ , քիչ շատ թուաբանութեան ,
 Աշխարհագրութեան եւ առաւել եւս ձե-
 լի ու կարի քաջահմուտ վարժուհի մը
 կ'ուղուի 4—4 1/2 ոսկի ամսականաւ : Դի-
 մել «Մաղիկ» ի Խմբագրութեան :



տխուր էին. պարկեշտ գեղեցկութեան և ազնիւ վարուց այսքան հզօր է աշխարհակալութիւն: Այս, տխուր էր գիւղն համբուն. « Բայց ի՞նչ եղաւ Քրիստինէ, ի՞նչու չեկան այս տարի », ահա որ ինչ կը հարցնէին իրարու ամէնքն ալ, ծերն ալ, երիտասարդն ալ, պատանին ալ, մանուկն ալ: Բայց ի՞նչ պիտի լինէր Քրիստինէ. Քրիստինէ մեռած էր... Այսպէս ճակատագրեալ չէ՞ ծաղիկն, առտուն փթթիլ և քիչ յետոյ թարչամիլ:

Ըսի թէ Քրիստինէ վարդի կոկոն մ'էր նախ, յետոյ՝ իւր համայն գեղեցկութեամբ և շնորհօք բացուած վարդ մը, ապա՝ գեղնեւը զեղնեւը թափելու վրայ ամբողջ թերթիկ, և վերջապէս թէ՛ կանուխ հասած ցորտ իրիկուան մը սառուցիկ հողմէն վարեալ չգիտեմ ինչ, որոյ համար մարդիկ տակաւին հրեւարած չեն անոյշ բառ մը, զի արդարև չիք ինչ յայդ մտոյշ. բայց չըսի տակաւին թէ Քրիստինէ ինչու այնքան կանուխ թառամեցաւ: Ահա՛ այն ալ: Քրիստինէ հոգեզուակ մ'էր այն մայրիկին, որոյ հետ անասնք զնա տարիներ. իւր հարազատ մայր, մի հէգ և հիւանդոտ այրի, չկարողանալով խնամել իւր զաւակ, գտած էր նմա մի այլ մայրիկ, որ, բարի ու գթով զեղուն, եղած էր արդարեւ իբրև հարազատ մայրիկ Քրիստինեայ, յետոյ խեղճ կինն, թշուառագոյն մայրն մեռած էր հիւանդանոցի մը մէկ անտուեր խորշն, ուր միայն մահը կը թագաւորէ, մեռած էր նա ո՛չ այնչափ ողբալով իւր վաղանցիկ կեանք, որքան լալով անոր վրայ, որ ո՛չ ևս իւրն էր: Քրիստինէ իմացաւ յետոյ այս ամէնը, զգաց այս ամէնը, և այս ամէնը, հարազատ մօրն թշուառութիւն ու աղեկտուր վախճան, կըրծեցին անոր զգայուն ու փափկիկ սիրտ. և երբ կը կարծուէր որ անիկա սիրոյ զոհ կ'երթայ, ո՛չ մեծ տարբերութեամբ ճամբիւր էր մօրը սէրը մեռցուց զնա: Ե. Տ.

Ձ Ե Ն Ո Ր Ս Ի Ա Ղ Ջ Ի Կ

Ծովը պատեր է մութ գիշերակրթիկ, Փրփրադէզ կոնակներն կը ցայտին, Եւ հիւսիսային հողմուճք ուռուցիկ Տասանեն խարխուլ հիւղն ձրկնորսին:

Հոն կրակին առջև մամիկը պըպզած կը դիտէ բռնիչը ցիւ կայծերուն. Երբցին մէկ անկեան մէջ ըսուեամս՝ կը ննջէ մանկիսին ծանախուն:

Ձկնորսին աղբիկն ալ կապուսաչեայ՝ Մեծ ուռկան մը հիւսէ քիչ առ քիչ. Քանի բըռնաւունջ քամին ցուրտ գոռայ, Ձի կրնար հառաչանք իւր զպել:

Ամէն պտն կ'իջնէ անեղ ծովափը Գիշերու քէ հեռուն ձրկայ՝ լայս, Եւ խորհի ծովու մարդոց տագնապը. Ձայն կուսայ սիրելոյն զու կորոյս:

Բայց պառուճ նըզով կարդաց աղբիկան, Յանցառ մագն բապիսակ իր գլխոյն, Եւ խորումայից այտերն անկեղան Բոցին դէմ կը փայլին նըրագոյն:

Գողանար դըստիկն աչքը շառուուր վեր, կը նըստի համանին ակնածու, Որ ուռկանն արագ հիւսել կըստիպէր, Եւ անով հացադրամ նարեխու:

Կուլ տուաւ լըռիկ մօրմտանքն ու լաց, Թեյը բոյլ մասնեղէն կը փախչէր. Եւ նըրեց արին վըրայ խըռոված իւր կուսիւր փոքրիկ խաչն յուսաբեր:

Վ. ՍՎԱՃԵԱՆ

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Դիտելի է թէ մայիս լէն ի վեր Ծրանասյի մէջ գործաւորական շարժում մը կայ, որ հետքնեւէ յառաջ կ'երթայ և որոյ հետեւանք՝ կ'սկսին հասարակութեան միտքը զրազեցնել: Այս շարժում առաջին անգամ սկսաւ հանրակառայ գործադուլով: Ընթերցողը կը յիշեն թէ՛ ձեռնհաս իշխանութիւնք՝ այդ տանն միջամտեցին, ընկերութեան վարչութեանց հասկըցնելով թէ աւելի մեծ դանդաղանոց տեղի չը տալու համար զիջուութիւն ընելու էին: Այս միջամտութիւն կարելի է նմանեցնել այն զօրաւոր դեղերուն որ հիւանդութիւնն մէկէն ի մէկ կ'աներևութացնեն, բայց ետքը վտանգաւոր հակազգեցութիւններ կը պատճառեն: Եւ ստուգիւ, ի՞նչ եղաւ արդիւնքն. — Տեսնելով որ ձեռնհաս իշխանութիւնք աւելի աշխատութեան կողմն են քան դրամագլխոյ, գրեթէ ամէն դասու գործաւորը մտադրեցին վերստին յայտնելու իրենց դժգոհութիւնը: Վարսավիրայներու աշակերտներն պահանջեցին որ իրենց վարպետները ամէն երեկոյ ժամը իննին խանութը գոցեն, և իրենց խնդիրն ընդունուեցաւ: Նպարավաճառներու աշակերտներն ևս հետեւեցան առաջնոց օրինակին, բողոքելով թէ օրը տանելու ժամ կաշխատին: Երկաթուղւոյ պաշտօնեայք ևս չուզեցին ետ մնալ, և բողոքագիր մատուցին առ Պ. Պ. Յոսէֆին և իվ կիւյո: Իսկ այս դժգոհներու ամենէն կարևոր դասը կը կազմեն հացագործներու աշակերտք, սոցա գլխաւոր պահանջումներն են թոշակի յաւելումն և աշխատութեան ժամուց նուազումն:


Յանգլիս Պախարաի խնդրոյն (այսինքն թղթախաղի մէջ խարդախութեան մը խնդրոյն, յորում կալլէսի իշխանը ձախող դէր մը ունեցաւ) գէշ լուծումը անգլիացի հասարակութեան յուզեալ մտքերը չէ՛ հանդարտեցուցած: Թէ՛ Լոնտոնի և թէ՛ դաւառական լրագիրք խտաւ քննադատեցին Իշխանին դերը, բայց ժողովուրդն՝ որ երրորդ կամ չորրորդ անգամ լինելով գահածառանգ իշխանին անունը կը տեսնէ ստորին տեսակ դատերու մէջ, այսչափ քննադատութեամբ գոհ չը լինիր. այս ծայրայեղ յուզման մէջ անըմբռնելի բան չը կայ այնպիսի երկրի մը համար՝ յորում թագին և սորա ներկայացուցչաց նկատմամբ տածուած զգայուններն շատ բարձր են: Բուն դատաւարտեան հիմայ այն չէ՛ որ պատուոյ դէմ մեղանջած է՝ խաղի մէջ խարդախութիւն ընելով և զոր դատարանն խայտառակած է. բուն դատաւարտեալը կալլէսի իշխանն է: Այսու հանդերձ, իշխանին ունեցած դերը միաքերը այս աստիճան յուզելու բնութիւն չ'ունէր, բայց կ'երևի թէ Պախարաի խնդիրն ջրոյ կաթիլն եղաւ որ ամանը յորդեցուց: Արդէն երկար տանէ ի վեր գիտելին թէ իշխանը սարաքի տակ ընկճուած է, բան մը որ արդէն մեծապէս կորսնցնելու տուած էր իւր վարին: Պախարաի խնդիրն ալ վերջին հարուածը եղաւ:

Մեծ խնդիր մը որ մտքերը շատ զրազեցուց և քանիցս երկու Եւրոպական տէրութիւններ իրար ձգել սպառնաց, այն է Անգլիոյ և Բորդուելի միջև ծագած վէճն՝ իրենց Ափրիկէի մէջ ունեցած ստացուածոց մասին, վերջնականապէս կարգադրուեցաւ: Անկէ Բորդուելական նոր պայմանագիրն՝ որ կը ձգէ իրենց յարաբերական դիրքն՝ անցեալ չարթու մէջ ստորագրուեցաւ երկու Տէրու-

թեանց կողմանէ: Անգլիոյ համար կորհրդարանին վաւերացումը կը մնայ միայն, բայց այս վաւերացման մասին ու է տարակոյս չը կայ, այնպէս որ այս փափուկ խնդիրն այժմէն կարգադրուած կրնայ համարուիլ: Պէտք է շնորհաւորել անգլիացի քաղաքագէտներն որ ըմբռնած են վերջապէս թէ, Անգլիոյ պէս հզօր ուղիւ թեան մը հետ բազումամբ տըկար երկրի հանգէպ իրենց կողմանէ բռնուած ընթացքն շատ պատուարեր չէր Բրիտանական քաղաքագիտութեան: Բորդուելի մեծ ճգնաժամեր անցուց որչափ տանն որ տեւեց այս խնդիրն՝ որ յաջող էլք մ'ունեցաւ: Իւր քաղաքագէտք մեծ հաստատամտութիւն ցոյց տուին, և եթէ իրենց ճգունքն առաւել յաջողութեամբ չպատկուեցան, եթէ Բորդուելի բոլոր իւր բազմանոց կատարումը չստացաւ, յանցանքը իրենցը չէ: Բորդուելի նախամեծար համարեց իրեն համար առաւել կամ նուազ աննպաստ պայմաններ ընդունիլ քան թէ պատերազմ հրատարակել:

Բրուսիոյ երեսփոխանաց ժողովը չ'ուզեր ու է բացատրութիւն տալ թէ ի՞նչ պատճառաւ ցորենի տրոյց նուազում չ'ընդունիր: Ուստի հասարակութիւնը պիտի շարունակէ սուղ հաց ուտելու, առանց պատճառը գիտնալու: Քափիթիլի գործաւոր նորին յայտնեց կառավարութեան բացարձակ դիտաւորութիւններն. յայտարարելէ վերջ թէ օտար երկիրներէ ստացած տեղեկութիւններն չէր ուզեր հաղորդել, սպահովցուց թէ Ռուսիա պէտք եղածին չափ ցորեն կրնար ներածել, և թէ սովի վախ չկար բնաւ: Մօսքը վերջացուց հերքելով իւր հակառակորդաց ըստգրտանքն, որք կ'ըսէին թէ գործաւորաց բարեկեցութեան պէտք եղածին չափ հոգ չը տանիր, բարեկեցութիւն, ըստ, որ ամէն բանէ առաջ վաճառականական հաստատունութենէ կախումն ունի. բան մը՝ զոր կը վտանգեն խռովարարք: Պ. Քափիթիլի այս խօսքերն չեմք կարծեր որ ժողովրդեան միտքը հանդարտեցուցած լինին, զի ցորենի տրոյց դէմ բողոքներն հետզհետէ կը սաստկանան: Բայց աւելի կարևոր է Ռուսիոյ մէջ հրատարակուած պաշտօնական տեղեկութիւններն յառաջիկայ հունձքի մասին: Այս տեղեկութիւններն կը հետևի թէ Պէտարապոլոյ հարաւային, Միսիլի հարաւային-արեւելեան, Կովկասիոյ հիւսիսային, Ուֆիսի արեւելեան կողմններէն և Տօն նահանգին մէկ մասնէն միայն կարելի է լաւ արդիւնք սպասել: Ռուսիոյ կողմերը կամ միջակ կամ գէշ լինել կ'սպառնան հունձքերն: Այս տեղեկութիւնք շատ համոզայն չեն թուիր Պ. Քափիթիլի լաւատեսութեանց:

Վերջին տաններս Ռուսիոյ մէջ սպառազինութեանց փութով յառաջ տարուիլը և մանաւանդ Կալիպի սահմանագլխոյն վրայ զօրաց յաւելումը մեծ մտահոգութիւն կը պատճառէ Աւստրիոյ մէջ: Ընդունուած տեղեկութիւններէն կը հետևի թէ Ռուսիա կը ջանայ պատերազմի տանն չորս միլիոն զօրք հանել, և թէ Բոլոնիա, Լիւզանիա և Վօլինի պաշտպանողական խիստ լաւ վիճակի մը մէջ զըրուած են: Աւստրիա-Հունգարիոյ պատերազմական նախարարը բնականաբար նոր փոխառութեանց կը կարծախ, ի մէջ այլոց Կալիպիոյ մէջ զինուորական ընդարձակ հիւղեր շինելու համար, և տեղական թնդանօթածիք զինուորաց մէկ մասը վերակազմելու համար: Այս խորհուրդներն միլիոններու կը կարօտին, և կարծիքներն պատրաստել պէտք է այս նոր զոհողութեանց: Այսու հանդերձ, եթէ արդէն թէ որ Ռուսիա պատերազմ հրատարակել ուզէ, շատ շուտ չը կրնար բան մը փորձել:



Գ Ա Ի Ա Ռ Ա Կ Ա Ն Լ Ո Ի Բ Ե Բ

ՍՈՒՆԿՈՒՐԼՈՒ, 1891 մայիս 28. — 1891 տարին հիասքանչ տեսարաններ ստորագրեց մեր աչաց առջև: Սաստիկ էր ձմեռն. արեգակն ամպոց ներքև զողեալ՝ բարդ ի բարդ կը տեղային ձիւներ: քաղցրամրմունջ և արչաւասոյր գետակք կաշկանդեալ էին սառնամանեօք: լուռ էին անտառք և այգեստանք: յամեն վայր կը տիրէր ամայութիւն: մէն մի մըշակ ըստ իւր կարողութեան սերմանեցով ցորեանն՝ յապագային առատ հնձոց կ'ակնկալէր: Սակայն ամպեր դամ քան զգամ փարատեցան: Ապրիլի մէջ սլայծառ էին երկինք: գեղաշողչող արեգ կը փողփողէր ոսկեգոյն: ի գիշերի եթերային կամարն զարգարեալ էր ճաճանջարձակ աստեղք: ցայգոյ բամբակն թեթեւապար կ'ընթանայր: ամէն ոք կը մաշէր կայլակ մի անձրևի կատուով: յոռետեսք սկսան նախատեսել շարագուշակ սովի մը դառնատը: Եղիկի զիւղացիք երերակոծ կը տատանէին հանգոյն թռչնոյ թևարախ որ ընդ հուպ ծարաւէն պիտի փչէ իւր շունչ: Մերձ էր մայիս, գեղածիծաղն մայիս որ իւր բուրումնասփիւռ և նախշուն ծաղիկներով հանդերձ բերաւ թխագոյն ամպեր, երկնային լրթակապոյտ կամարն փոխեցաւ մի սև վարագոյրի: Թօնընկէց անձրևք կը տեղային հանապազօր: փայլակը կը շողար, գոռ որոտմունք և ահեղ դարձիւնք լսելի կը լինէին: ոչ ևս էր երկիւղ, այլ յոյս արդիւնաշատ սպառնալի: յորդահոս գետակն «Պուտագ էօզիւ» կը մըռնչէր զայրագին՝ առ ոչինչ համարելով հոյտէն կամուրջն որոյ՝ երկու կողերէն փլուրփուրք կը ժայթքէին: Կիրակի էր: քաղաքին երկատարդք անգործութեան առթիւ գիւմած էին այդիններու, ոմանք ի չըլտագոյնութիւն, ոմանք արբեցութեան հեշտալից բաժակներ քամելու և այլք գործելու նպատակաւ: ամպերը վերստին սկսան որոտալ և տեղատարափ անձրևը դողացուց նորահաս սըրտերը: Յայտ սպառն մաշմտական կին մը, որոյ առաջին այրը չէնքի մը փլատակներուն ներքև մնալով շնչատապառ մեռած էր, իւր երկրորդ առն յոռի բնաւորութենէն յափառացեալ և սրտմտեալ կերթայ խորասուզիլ հեղեղներու մէջ: «Ազգայ» որ Սուեկուրուի հիւսիսային արևմտեան զինն վազելով «Պուտագ էօզիւ» կը թափի, այն ժամանակ քստմնելի երևոյթ մը ստացած էր: նա կը փորձէ քայլերն և վերջապէս կ'որոշէ մեռնիլ: մերթ կոհակաց վրայ ծփալով և մերթ ընդ փրփրովք թաքթաքուր, կէս ժամ հեռուն կը մըղուի ջրոյ ահագին ընթացքէն, ուր արիասիրտք ոմանք կը փութան ազատել նորակեանքը և կը յաջողին: Սեւակորոյս կինն որ ժամ մի առաջ յղփացած էր կեանքէն՝ օգնութիւն կը հայցէր բարձրաձայն: «՛հ, քանի քաղցր են կեանք, վա՛յ անոնց որք զայն պատուաւոր կերպով վարելու և թէ՛ իրենց ազգին, թէ՛ հզօր պետութեան որում կը հըպատակին և թէ՛ մարդկային ընկերութեան օգտակար հանդիսանալու չեն աշխատիր:

ԿԱՐԱՊԵՏ Զ. ԵՐԱՆՁԵԱՆ

ՍԵՒԱՆԻԿ, 4 յունիս 1891. — Առատութեան լուրեր արուարձաններէն հետզհետէ կը հասնին. երկրագործ դասու դէմքերն զուարթ են. արդէն մանգաղը շատ հունձքեր ի յայտ բերած է. և մնացածը մօտ աւուրց մէջ կ'ամբողջանայ: արմոտաց գնոց անկում տակաւին տեղի ունեցած չէ:

Գարնան եղանակը՝ բաղդատմամբ նախորդ տարիներու՝ շատ սքանչելի կերպիւ վայելեցինք: անպակաս անձրևք, զով հովեր, բաւական նպատակներն մեզ սոյն եղանակի զուարճատեսիլ և հաճոյագրաց բաղդն վայելել, որ նախորդ տարիներ մեզ համար երևակայութիւն մի էր: սակայն մայիս 28, 29, 30, սոյն երեք աւուրց անակնկալ տօթն՝ մինչ 37 աստիճան ջերմութեամբ ահարեկեց զմեզ: հաստարկութեան շատ անձեր (փորհարութեամբ) նեղուեցան, և հետևանքն կասկածելի էր: եթէ մեր սաստկաշունչ վարտար քամին օգնութեան չը փութար մաքրելու վատառողջ կլիմայն: Սոյն վերջնոյն արկածներ իսկ պակաս եղած չեն, որովհետև այն աստիճան սաստիկ էր հոսունն որ, արտօրէից մէջի անքաղ հնձոց հատիկները հասկերու միմեանց բարախմամբ կոտորած և գետին թափած են:

Մտերու գինն տակաւ առ տակաւ սկսած է բարձրանալ. նախորդ շաբթու 100 փարանոց միւրը այսօր 3 1/2 զրուշի բարձրացաւ, սակայն ամենաընտիր տեսակ:

Սնանկութիւնք աստ ևս կը յաճախեն. այս առթիւ տեղոյս հրատարակն իսկ, փոքր ինչ նեղցած է:

Բարեբաղդարար մերայինք սոյն վերջին դասակարգէ զերծ են, իրաց առեալ թատերական խումբն, որ տեղոյս փողոցներու մէջ կը թափառի թշուառ և անտանելի խեղճութեամբ, և ընդ հակառակն օր յօրէ նորանորներ այսր գալէ չեն խուսափիր, իրենց ընկերակցաց բաղդակից լինելու, և տեղարնակ փոքրաթիւ Ազգայնոցս վրայ ծանրանալու: Կ'զգուշացնեմք այնպիսիան որ եթէ երբէք սխալմամբ իրենք ևս սոյն փորձն ընել համարձակին, բնաւ ոչ զո՞ք պիտի բաղձայ աջակցութեան մասնակցելու: * * *

ԽԱՐԵՐԵՐԷՆ Կը գրեն մեզ.

Մայիսն ամպերով և անձրևով կ'անցնի. պահ մը կարծես փոխադրուած լինէինք Ամերիկեան երկնքի մը տակ: անհատնում ամպեր: անհատնում անձրև, չ'գիտեմ արդեօք որո՞ւ մեղքէ: Ամերիկա՞ գնացողներու, թէ ոչ ճամբէն ետ դարձողներու, բայց կ'երեւի թէ յաւէտ ճանրողներու մեղքը քրէական ըլլալու է: լաւ հունձք կը խոստացուի, եթէ անձրևները դադար տան առ պահ մը: — Կ'երթան, շարաթը 50 հոգիէն աւելի կերթան. թէ ո՞ր — ասոր պատասխանը առածի կարգանցած է: Ամերիկա, հարուստի ալ, աղքատի ալ աչքը հոն է: 20 ոսկի, անցագիր մը, ջրի մը գաւակին վրայ ինկած կը հասնին Սամսոն. անկէ ալ նաուս մը մէկ խորը՝ և ահա կը տեսնես մէկ քանի օրէն Մարսիլիա հասած են: քանի մի շաբաթ վերջ նոյն մարդիկը պիտի տեսնուին անշուշտ գործարանի մը դրան վրայ՝ արգահատելի դէմքով կանգնած: ի՛նչ խեղճութիւն, ի՛նչ թշուառութիւն, իսկ թէ գնացողի մը իւր գնալուն պատճառն հարցնես, ահագին կարևորութեամբ փաստեր յառաջ կը նետէ:

ՏՕԲԹ. ՍՏԵՓԱՆ ԹԷՐՁԵԱՆ

Ամէն օր մինչև կէս օր հիւանդ կ'ընդունի կէտիք փառա առաջին փողոց թիւ 18 տան մէջ և կը դարմանէ ամէն տեսակ հիւանդութիւններ: Ժամը 8էն վերջը (Ը. Թ.) կը գլուխուր Պահճէ-Գարու Արքեան գեղարանը: Ուրբաթ օրեր թէ՛ տան եւ թէ՛ Դեղարանին մէջ ձրիապէս կը դարմանէ:

Ն Ե Ր Ք Ի Ն Լ Ո Ւ Բ Ե Ր

Պատեօմարաշխութիւնք. — Ամասիոյ կառավարիչ անուանեցաւ Մէհմէտ Ալի փաշա, կառավարիչ Մալաթիոյ: — Մալաթիոյ կառավարիչ անուանեցաւ Մէհմէտ Էմին էֆէնտի, կառավարիչ Ամասիոյ:

— Գաղուստ էֆ. Մարկոսեան և ընկերք Ջմիւռնիոյ մէջ անուշ ջուր բերելու արտօնութիւն խճրած լինելով, Հանրօգուտ շինութեանց նախարարութիւնն այս մասին տեղեկութիւններ ուղած է Այսթընի կուսակալութեան:

— Արգարութեան գործոց նախարարութիւնը հրամայած է դատաստանի երթարկել Պէրութի Կազէ դաւառակին նախնական ատենին անդամ ու հարցաքննիչ դատաւոր Հիւսէյին Իլմի էֆէնտին, նոյն դատարանին ընդհանուր դատախազի օգնական ստախան Իպրահիմ էֆէնտին, Հալէպի կեդրոնական նախնական դատարանին առաջին հարցաքննիչ դատաւոր Ահմէտ էֆէնտին, Հալէպի Բուսիալէ դաւառակին նախ ու նախնական դատարանին նախագահ Սալի էֆէնտին, հարցաքննիչ դատաւոր Հաֆըզ էֆէնտին ու ընդհանուր դատախազի օգնականի փոխանորդ Մէհմէտ Շէրիֆ էֆէնտին, Այնթապի նախնական դատարանին անդամներէն Հաճի Ահմէտ էֆէնտին, Մարզուանու նախնական դատարանին անդամ Ավրամ աղան, Մանասղըրի Գէրէպինէ դաւառակին նախնական դատարանին անդամ ու հարցաքննիչ դատաւոր Իպրահիմ էֆէնտին, Կէօրիւճէի պատժական դատարանին նախորդ նախագահ Նէճիպ էֆէնտին և Սէլանիկի Լանքազա դաւառակին նախնական դատարանին առաջին քարտուղար Մահմուտ պէյն: Սոքա իրենց պաշտօնին մէջ այլ և այլ զեղծումներ գործած են:

— Ֆէնէրի Պատրիարքարանը հրամայեր է Նէրէզի մեզբապուրիտին պտոյտ մը կատարել իւր թեմի շրջակայ քաղաքները, որպէս զի իրեն դէմ եղած գանդատները բարձուին իւր բացակայութեան միջոցին:

— Ծովային առևտրական դատարանը սընանկ հոշակած ու բանտարկել տուած է ի Գառըզիւղ Մօտա ճատտէսի թիւ 138 տունը բնակեալ Ճօլիւն օղլու եռուն, ի Պոլիս Բամանսօ խան թիւ 22 սենեակը հաստատեալ Օհան և Լուտովիկ Խիւպէսէրեան, և ի Մեծ Շուկայ Սէպիլ փողոց թիւ 32 խանութը հաստատեալ Միխալ էնտէթապլուս անուն վաճառականները:

— Սապահ կ'իմանայ թէ ի Մեծ Շուկայ Խաֆաֆլար փողոց հաստատեալ կաշի վաճառական Մրմբեան և Ուզունեան ընկերութիւնն 1000 ոսկոյ չափ պարտքով դադարեցուցեր է իւր վճարումները:

— Այնորոսի յունական վանքը հրոյ ճարակ եղեր է:

— Սապահ կ'իմանայ թէ Վիզէ գաւառակին մէջ 22 հոգի ձերբակալուեր և Ազրիանուուպոլիս զրկուեր են՝ իրրև գողոնաթաքոյց Սինէքիի աւազակաց:

— Տէրքօսեան ջրի ընկերութեան նախորդ տնօրէն Թէոնօ պէյ մենաշնորհ խնդրած է «Օսմանեան ընդհանուր Ապահովագրական Ընկերութիւն» մը կազմելու համար: Ընկերութիւնը օսմանեան դրամատէրներէ պիտի բաղկանայ և առաջարկեալ պայմանք կալուածատեարց համար աւելի օգտակար և անվահովիչ պիտի լինին, բաղդատմամբ օտար ընկերութեանց:

— Երևանի քաղաքի նախարարներին կազմակերպելու մասին կ'ընդհանրվի այժմ գոնե մի քանի միջոցառումներ, որոնք ներկայացուցած է Օսմ. Հանրային պարտուց վարչությունից Նախագահ Պ. Օսմանյանը: Կ'ընդհանրվի նաև թէ Օսմանյան քաղաքի փոխարտություններն ընդհանուր կերպիւ միացնելու խորհուրդ կայ, համանման արժէքով և 4 առ 100 տոկոսով:

— Երևանայէն բերուած օտար գրքերը, լրագիրներն ու հանդէսները քննելու համար յատուկ սրահ մը յատկացուած է, կըսէ Սապահ, Սիրքէճի կայարանին մէջ: Ուղեւորք պարտաւոր պիտի լինին այդ սրահէն անցնելու:

— Յառաջիկայ օգոստոս ամսոյ սկիզբը պիտի սկսի Կ. Պոլսոյ քարտօմանց շինութիւնը:

— Տաքթ. Մակեդան և Տաքթ. Քորատո էֆէնդիներու կողմանէ կատարուած քննութիւնը հաստատած են թէ Հալէպի Հարիմ գաւառակի ու Ամիք գաւառին կողմերն երեւան ելած հիւանդութիւնն հնարաւ չէ, այլ հնարաւոր նման ջերմ մը, որ կրնայ ըստիլ թէ սովորական է այդ տեղեաց համար՝ տեղւոյն դրոյ ու ճահիճներուն պատճառաւ:

— Չեռնհաս խշմանութիւնը, առևտուրի դիւրութեան համար, մտադիր է ճիւղէն 20 և 10 փարանոց մանր դրամներ պատրաստել:

— Հանրօգուտ շինութեանց նախարարութիւնն ի մտոյ պիտի սկսի հրատարակել «Կամիջոց», խճուղեաց և Նրկրագործութեանց լրագիրս մը, որուն Տնօրէն-Սմարտի կարգուած է Սիւրէյմանիէլի զատէ Թահիր պէյ, նախորդ անգամ Սապահի Սմարտութեան:

— Մովսիս առևտրական գատարանը կ'ըզբարդի ի Պոլիս, Պահչէ-Գարու, Էսաա էֆէնդի խանը հաստատեալ վաճառական Տէմիրքարուլեան ելլարոց և ընկերութեան սնանկութեան խնդրով: Ի շարս ամբաստանելոց, կը գտնուի նաև խանին սենեկապետը՝ իրր մեղսակից սպրանայ մէկ մասին այլուր փոխադրութեան գործին: (Սքամպուլ)

— Հանրային Պարտուց վարչութիւնը մշտադիր է լրագիրներու ու յայտարարութեանց վրայ դրոշմաթուղթ փակցնելու տեղ՝ դրոշմել (stamp) միայն:

— Ի Սարբերգ, մայիս 13էն մինչեւ յունիս 16 (Ն. Տ) երկրաշարժի առաւել կամ նուազ զորաւոր ցնցումներ զգացուեր և փոթորիկներ տեղի ունեցեր են:

— Կայս. հրամանաւ ի մտոյ պիտի սկսի հրատարակութիւնն Մէարիթ անուն գիտական ու գրական հանդիսի մը, որուն խմբագիր կարգուած է Սաասէր լրագրոյ խմբագրապետ Ապուլլահ փաշազատէ Նուրի պէյ:

— Սելանիկի նամակատան մէջ աւանդի դրամներէն մեծաքանակ գումար մը գողցուեր և աւանդից պաշտօնեաց Ազիզ էֆէնդի անյայտ եղեր է:

— Ներքին գործոց նախարարութիւնն հըրահանգ ուղղած է ամէն կողմ թէ, զինուորական տարքն ոչ մահճատական հասարակութեանց պահանջող այն անհատացի՝ որոնք իրենց անունը ծածկած են, պէտք է հաշուել իրենց ծննդեան թուականէն, այդ թուականէն մինչև երեւան ելած թուականի միջոցին բանած զինուորական տարքը յաւելուլ այդ անձերու պատկանած թաղին կամ գիւղին առաջին տարւոյ զինուորական տրոց վրայ և այնպէս գանձել, այդ գիւղեալ տարքը ժողովրդեան բաշխելու պահուել ևս յարգել օրինական բացառութիւնները:

— Ի Զմիւռնիա, Տաքթ. Սթամբուլի տիրանուն մարդ մը քաղքին մէջ հեռաձայնի գրծեր հաստատելու արտօնութիւն խնդրած է կուսակալութեան:

— Ի Ֆէնէր սկսաւ պուլիարական եկեղեցւոյ մը շինութիւնն:

— Վճարեկ ատենին անգամ Հիւլի էֆ. հրահան ստացած է փութով Կոնստանդուպոլիս, նահանգին և իրաւասութեանը ներքե գտնուած գաւառաց դատարաններուն վիճակը քննելու համար:

— Քոնկրետիսան սը լէսը կը գրէ թէ կարնոյ նահանգին մէջ կը սիրէ կատարել անգործութիւն, զոր ստուգած է կուսակալ Հասան Սայրի փաշա՝ իւր վերջերս կատարած քննական պտոյտի պահուն:

— Բաղէշի վաճառականներէն Աղաճան էֆէնդի Պաքալեան, Շիրվան գաւառակին մէջ գտնուած պղնձի ու արծաթախառն կապարի հանքերուն համար շահագործման արտօնութիւն խնդրած է կուսակալութեան, ի դիմաց ընկերութեան մը զոր ինքը կազմած է:

— Ի Սելանիկ, գնդապետ Տաքթ. Ժաք Նիսիմ պէյի աներձագ Յուսա Եաքսէլ անուն հրեայի գիշեր սաեն առևանգուեր է տունէն, և արձակմանն համար 5000 սակի փրկանք կը պահանջուի:

— Երուսաղէմայ մէջ թրամուէյի գիծ մը շինելու մենաշնորհ խնդրուած է:

— Եանեսայի հեռագրական ու թղթատարական անօրէն Թահսին էֆէնդի մէկ ծրագիրն, որով տարեկան 60000 սակոյ հասութի առաւելութիւն մը կ'ապահովէ և ինչ ինչ բարենորոգումներ կ'առաջարկէ, հաւանութեան արժանացած լինելով, առ ի փորձ նախ և առաջ Եանեսայի մէջ պիտի սկսի գործարուել. այդ ծրագրոյ տրամադրութեանց համաձայն՝ Եանեսայն ու շրջակայներէն ի Պոլիս, ի Սելանիկ և ուրիշ գաւառներ, ինչպէս և յերկուս շարաթը մէկ անգամ զրկուած թըլթատարը յետ այտորիկ շարաթը 4—5 անգամ պիտի զրկուի: Նոյնպէս եօթմ օրէն Կ. Պոլիս եկած ու աստի մեկնած թղթատարք՝ ձեռք առնուած միջոցներով պիտի կրնան 4 1/2—5 օրէն հասնիլ:

— Քաղքէացւոց Պատրիարք Տ. Բաթրաս Իլիա, որ վեհ. Սուլթանին ներկայանալու պատիւն ունեցած և կայսերական մեծարանայ արժանացած էր, երեքշաբթի օր կայս. պալատ երթալով երախտագիտութիւն յայտնելէ յետոյ իւր հրաժեշտի ուղղոյնը մտոյց և յաջորդ օրը մեկնեցաւ յեգիպտոս, ուր իւր հասարակութեան վերաբերեալ ինչ ինչ գործերը կարգադրելէ յետոյ, Հալէպի ու Տիգրանակերտի ճամբով պիտի ուղևորի Մուսուլ:

— Թագլիլի վեգայէի մէջ կը կարգադրէ հեռեկանները:

Կամուրջներու ու խճուղիներու շինութեանց պահուն աշխատելու փոխարէն տըրուած գումարներու կանոնաւոր գանձումն ապահովելու համար, գանձեալ գումարներէն 100ին 5 գանձուցներուն յատկացուած է:

— Լրագրոց և յայտարարութեանց յատուկ երկու փարանոց դրոշմաթուղթերու կեղծն երևան ելած, որուն համար և նոր ձև դրոշմաթուղթեր պատրաստուած և շրջաբերութեան հանուած լինելով, լրագրոց հին դրոշմաթուղթոց մէկ ամիս, և միւս այլ և այլ հին դրոշմաթուղթոց գործածութեան ու նորերու հետ փոխանակութեան համար ալ երեք ամիս պայմանաժամ արուած է:

— Հեռագրական և թղթատարական վերատեսչութիւնն ցուցակ մը պատրաստած է՝ նշանակող ցամաքային ու ծովային թղթատարներու մեկնումն ու ժամանումը:

— Չարչամպայի Ֆազանճրգ գիւղէն վերայի գաղթական Հասան ու Արսլան, որք ժամանակէ մը ի վեր ասպատակութիւններ կ'ընէին, տեղական կառավարութեան դիմելով անձնատուր եղեր են: Սոցա ընկերներէն Հիւսէյին ձերբակալուեր է:

— Պատրայի Միւլի էֆիք գաւառին Սէվգէշիլուի գաւառակի գոյմագամ էմին էֆ. դատաստանի պիտի ենթարկուի՝ ոճրագործութեան ամբաստանեալ մէկ քանի մարդեր դատաստանի չըլանձնելուն և արձակելուն համար այն մարդերն, որոց բանարկութիւնը որոշուած է դատարանին ու հարցաքննիչ դատարարին կողմանէ:

— Անանարոյժերու վարժարանը յետ այտորիկ չորս տարիներու պիտի բաժնուի: Ա. և Բ. տարիներու դասախօսութիւնը քաղաքային բժշկական վարժարանին մէջ պիտի աւանդուին, իսկ Գ. և Դ. տարիներու համար ուր գործնական դասեր անհրաժեշտ են, դասախօսութիւնը Հայգալը ագարակին մէջ պիտի աւանդուին և ուսանողք գիշերօթիկ պիտի լինին:

— Որպէս զի երկրագործք կարենան օգտուել երկրագործական դրամատուններէն, երկրագործական Դրամատան Ընդհանուր տընօրէն վեհ. Միքայէլ էֆ. փորթուգալ, ըստ կայս. Իրաւէի, ընդարձակ ծրագիր մը պատրաստած է, որ այժմ Պետական Սորհրդոյ մէջ կը քննուի:

Ա Ռ Ե Ի Տ Բ Ա Կ Ա Ն
ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հասարակ և տանտիրական կոտորակներու վրայ դարեւոր գիտելիքներ, բազմաթիւ բողբոջատական ցուցակներով ներկայացած ընդհանուր աղբայ շախմատ դրութիւններ, Փոլերանոցի, Սակարանի, Պոլսոյ և Զմիւռնիոյ առևտրական սովորութիւններ, նոյնպէս առևտրական բազմաթիւ համեմատական գործողութիւններ լուծելու, մասնաւորապէս տուրաւոր ընթացիկ հաշւոց վրայ ընդարձակ բացատրութիւններ պարունակող սոյն ընտիր և զիւրուայց թուականութիւնն որ եօթը մասերէ և 240 էջերէ կ'բաղանայ, գեղեցիկ կազմեալ կը վաճառուի Ն. Կ. Պէրպէրեանի սպարանն. Գին 8 դրուէ:

Ա Ռ Ա Ջ Ն Ո Ր Դ
Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն
ՊԱՐՏԱԿԵՐԵՆ ԼԵՋՈՒԻ

Արիկեան էֆէնդի սոյն նոր երկը իւր գործերէն Հէմեանցի Միւլիսիապարը Փարսիէ անուն գրքին բանալին է: Գին 3 դրուէ:

Ա Ր Թ Լ Բ Կ Ր Ա Մ Ո Ց		Կ Ր Ս Մ Ո Ց	
Օսմ. լիբան 100 դրէ. էն			
Մէճիլիէ	108 10	Վեցնոց	403
Քառորդ մէճիլ	107 30	Քառորդ բօլ	89 10
Մանր մէճիլ	104	Նարուէն	87 10
Մէթալիք	101	Գրեթ	51 15
Պէշիկ	102 30	Սոք	109 34
Մանէիլ թղթատար 7 80			
Գնառիտ (երկդ.)	20 4	Իւր քանակ	703 4
Թահիլ: Օսմ. 1/10	79 10	Թագլիլ	19 10

ԱՐՏՕՆԱՏԻՐ Ա. ԱՐՏՕՆԱՏԻՐ
ՏՊԱԳՐ. ՆԵՐԱՆ. Ա. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Լսկի-Զապիլէ փողոց, թիւ 61